

# ՔՐԻՍՏՈՍԸ ԿԸՆ—ՔՆՆԸ ԳԸՏԸ ԿԸՆ

## Շ Ա Ն Թ.

### «Հին Աստուածներ»

Մեր գրականութիւնը շտեմանաւօրէն է ապրում այժմի վերջերս լոյս տեսած Շանթի «Հին Աստուածներ» գրքի հասարակական և գրական իր նմանը չեղած աղմուկ հանեց: Այդ պիեսան քննադատում է մամուլի, հրատարակական դատախօսութիւնների, երեկոյթների, գրական դասերի միջոցաւ. ոմանք պաշտպանում են, ոմանք ոչնչացնել ցանկանում զեղարուեստական այդ գործը: Հասարակական լայն խաւերը իրենց հետաքրքրութեան ապացոյցներն են տալիս պիեսայի երկու ամսուայ մէջ վեց անգամ տեղի ունեցող ներկայացումներին ամբողջ թատրոնը լցնելով: Հայոց թատրոնը և գրականութիւնը այսպիսի օրեր չեն տեսել երբէք:

Մանօթեանք այդքան մեծ աղմուկ հանած սիմբոլիկ պիեսայի նախ համարում բովանդակութեան հետ: Առաջին գործողութեան առաջին տեսարանում նկարագրուած է Ճերմակաւորի և Վանահօր խօսակցութիւնը: Վանահայրը Սեանայ կղզու վրայ մի եկեղեցի է շինել տալիս. Ճերմակաւորը հեղնում է Վանահօրը, ծաղրում է կեանքի և այլ հիմնական արժէքների մասին ունեցած նրա տեսակէտները: Վանահայրը նրա կարծիքով մի մարդ է, որը «թըշնամի է ամեն մի զեղեցկութեան և շարժումի, ուժի և ծնունդի», որը ցանկանում է իր և իրան շրջապատողների «զգայարանքները շարացնել և կրքերը մարել»: Ապա գովում է իր աստուածներին, որոնք ամեն տեղ են, որոնց մեհեանները այնպէս անխորտակելի են, ինչպէս կեանքը ինքը. «Կթափուեն քարերը, կրփոխուեն անուանները, բայց իրենք աստուածները կան ու կրմնան»: Վանահայրը էլ իր Աստուածն է գովում, որի համար և տաճար է շինում: Գովում է ասնջանքն ու տառապանքը, որոնք «մաքրում և բարձրացնում են հողին»: Վանահօր կարծիքով մահը կեանքի ամենախոր բանն է:

Վանահայրն էլ իր Աստուածն է գովում, որի համար և տաճար է շինում: Գովում է ասնջանքն ու տառապանքը, որոնք «մաքրում և բարձրացնում են հողին»: Վանահօր կարծիքով մահը կեանքի ամենախոր բանն է:

Այս տեսարանի մէջ գրուած է արդէն պիեսայի ամբողջ ծրագիրը: Յաջորդող տեսարանների գէպերը, հոգեկան ապրումների նկարագիրները այդ երկու տիպի աստուածներին վերաբերող հիմնական իդէաների լուսարանմանն են ծառայում:

Երկրորդ տեսարանից սկսուած է պիեսայի բուն նիւթի զարգացումը: Սեանուած եկեղեցի շինել տուող Մարիամ իշխանուհու եղբայրը և նրա աղջիկ Սեղան Յամաքաբերդից Սեանայ կղզին դալիս փոթորկի են հանդիպում: Նաւը ուժեղ աստամուտներ է ենթարկւում: Աղջիկը ընկնում է ծովը: Նաւում գտնուող երիտասարդ Արեղան իրեն ծովն է նետում և ազատում աղջկանը: Իշխանը սրտանց ցանկանում է վարձատրւած լինել Արեղային: Եթէ նա արեղայ չլինէր, կտար նրան իր նժոյգը, իր սուրը, նոյն իսկ իր աղջկան, որը իսկապէս աշխարհքի օրէնքով այժմ նրան է պատկանում. սգուրսը աշխարհի մէջ ով ինչ վերցուց, վերցնուց, ասում է իշխանը: Նրան մնում է միայն Արեղայի ձեռքը սեղմելով իւր շնորհակալութիւնը յայտնել:

Այս գէպից յետոյ Արեղայի մէջ մեծ փոփոխութիւն է տեղի ունենում. աղջիկը—Սեղան գտնում է նրա մտածման, զգացումների, երեւակայութեան թաղուհին: Նրա խցակից կոյր վանականը նկատում է այդ բանը, յանդիմանում է նրան և ապաշխարութեան ու աղօթքի հրաւիրում:

Կոյր վանականի հետ ունեցած կարճ խօսակցութիւնից յետոյ, Արեղայի աչքին գիշերուայ մութի մէջ երևում է Սեղան և իր հետ մեղմօրէն գրուցակցում:

Երազանքները հանդիսա չեն տալիս երիտասարդ արեղային. ծովափի մօտ, մի ժայռոտ տեղ տրեք մայր մանկու ժամանակները տեսնում է բնութեան հոգիներ—միզանուշներին կանանց կերպարանքով: Միզանուշները սէրն են երգում, Արեղային յիշեցնում են Սեղայի հետ պատահած գէպը, յայտնում են, որ իրենց կարող է տեսնել նա՝ ով սիրում է: Աշխարհի օրէնքը սէրն է:

Միզանուշները անյայտանում են, երևում է մի ճգնաւոր և զգուշացնում Արեղային, որ չքանդի իր ոտքերի մօտ եղող ունայնութեան փոսը, որը ինքը իր մատերովն է փորել: Ճգնաւորի համար կեանքի բոլոր արժէքները ունայն և անմիտ բաներ են:

Այս պատկերին յաջորդում է յանկարծ մի այլ պատկեր. Սեղան է երևում և Արեղային այն համոզմանը բերում, որ ունայնութեան փոսը կարելի է լցնել միմիայն «շոյոզ», «անուշ», «քնքուշ» երազներով: Արեղան ոտքը փոսի վրայ է դնում. նա էլ դատարկ չէ. հպարտօրէն կանչում է. «հէյ, դուն, ճգնաւոր, հէյ, ունայնութեան փոսը լեցուած է, լեցուած»: Այս տեսիլքի շրջումից յետոյ Արեղան հոգու երեքուն վիճակի մէջ է. էլ չի կա-

բողանում երազն ու արթնութիւնը իրարից տարրերել: Գառնում է իրեն մօտեցող վանականներից մէկին և հարցնում. «Մ՞ըն է երազը, որը արթուն. ըսէ, եթէ գիտես. և ի՞նչ քան է ինքը երազը».....

Հոգեկան խորը տատանումներից չի կարողանում ազատուել Արեղան. նա մի անգամ հոգով ապրում է (դրամայի մէջ իբրև իրականութիւն է պատկերացրած) հեթանոսների խրախճանի և կրօնական պաշտամունքի մի տեսարան, որը տեղի է ունենում մի մեհեանի մէջ: Այնտեղ եղողները «սէր», «գեղեցկութիւն» «կռիւ» ու յաղթութիւն են երգում և հիանում Վանազնի և Աստղիկի ծնունդը գիտելով: Արեղան ապրում է նրանց պէս, նրանց զգացումներով և իդէաներով տարուած. օրհնում է յաղթանակը, սէրը և երկրպագում հին աստուածներին: Այս ուժեղ տեսիլքից յետոյ նա մի քանի օր հիւանդ է մնում: Վանահայրը, որը տեսնում էր Արեղայի մէջ տեղի ունեցող փոփոխութիւնը, որոշում է, որ նա հեռանայ անապատից: Արեղան առանց այն էլ պէտք է հեռանար. մի քանի օրից յետոյ, ծովը յուզուած ժամանակ, Սեղայի ասածի պէս, իրեն ձգում է ծովը, այսինքն՝ կեանքի ծովը:

Վանահայրը՝ ուժի. կամքի, համոզումի այդ սարուկը, իր երկտասարդ ժամանակը Արեղայի հոգեկան դրութեան մէջ է գտնուել մի անգամ: Նա սիրահարուած է եղել 25 տարի առաջ այն իշխանուհու հետ, որը այժմ իր մարդու մահուանից յետոյ եկել է Յամաքարերդ և Սեանի վրայ Վանահօր օգնութեամբ եկեղեցի է շինել տալիս: Իշխանուհին խորն և նուրբ է սիրել. 25 տարի շարունակ իր զգացումների աշխարհում փայփայել է այդ սէրը: Այդ մասին խօսում է Վանահօր հետ և նրանից փոխադարձութիւն պահանջում: Վանահայրը փոքրիկ տատանումից յետոյ կտրուկ մերժում է այդ զգացմանը պատասխան տալ և հեռանալով Յամաքարերդից՝ որոշում է քանդել եկեղեցին, որովհետև նա զգայական սիրոյ ասածուն է նուիրուած:

Վանահայրը իր մտադրութեան մասին հրապարակաւ յայտնում է միաբանութեան, բացատրում է քանդելու պատճառները: Պէտք է նոր տաճարներ շինել: Վանականները ծիծաղում են Վանահօր վրայ. նրանք ոչ մի կերպ չեն կարող հասկանալ և հաշտուել Վանահօր այդ տարօրինակ մտքերի հետ: Վանահայրը յուսախար իր միաբաններից՝ հեռանում է այն խորն համոզմամբ, որ նրանց հետ ընդհանուր գործ սկսելը այսուհետև էլ անհնար է: Նա գնում է իր Աստու համար մի այնպիսի հոգեշէն տաճար շինելու, որը չի կարող աւարտուել, այլ միշտ վերաշինուելու կարիքն ունի:

\* \*

Շանթի այս գրուածքի մէջ ցուցադրուած են երկու իրար հակառակ հոգեկան տիպեր, որոնք թէև դուրս են դալիս նոյն արմատից և աշխարհահայեացքից, բայց բոլորովին տարբեր ուղղութեամբ են զարգանում: Այդ տիպերից մէկը Վանահայրն է, միւսը Արեղան:

Վանահայրը հաստատ համոզումների, վճռական կամքի, հոգեկան մեծ էներգիայի տէր մի անձնաւորութիւն է: Աշխարհային սիրոյ անյաջող վախճանից յետոյ նա դուրս է քամում իր հոգուց զգայարանքներին և բնազդներին վերաբերող ամեն մի բան և սկսում իր ներքին կրօնական ինքնակատարելութեան մասին մտածել: Վճռական և շղիջող է Վանահայրը: Հիւանդ Արեղային դուրս անելու վճիռն է յայտնում, որովհետև նա այլ ուղիով էր սկսել գնալ: Բշխանուհու հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ կամքի մի ակտով ճնշում և ոչնչացնում է իր մէջ դեռ միացող սիրոյ զգացումը և որոշում է քանդել արդէն աւարտելուն մօտ եկեղեցին, որովհետև նա իր համոզումներին հակառակ շարժառիթներից է առաջացել: Վանահայրը համոզումներից արագութեամբ գործողութեան է անցնում և աշխատում այդ երկու կողմերի մէջ ներդաշնակութիւն պահպանել:

Վանահայրը ոչ միայն մտքի և կամքի տէր մարդ է, ինչպէս նկարագրում են քննադատներից շատերը, այլ և նա զգացումների մարդ էլ է: Բնազդների և զգայութիւնների ճնշումից յետոյ նա հոգով բարձրանում է դէպի անդրբնականը և դուրս հոգեկանը: Դէպի ճշմարտութիւնը ունեցած նրա խոյանքները, մտքի յազմանակի համոզումը, կրօնական խորն ապրումները և ներքին խորասուզումները, մշտական շինելու և քանդելու գործողութեան գիտակցութիւնը, կեանքի կոնտրաստների, իր և ձերմակաւորի, իր և միարանութեան մէջ տեղի ունեցող կռիւները չէին կարող զգացումներից շրդիւել: Բշխանուհու հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ աւելի ևս պարզւում է, որ նրա հոգու մէջ տեղ ունէին ոչ միայն մտքի և համոզումների, այլ նոյն իսկ աշխարհիկ սիրոյ քօղարկուած զգացումները:

Պիեսայի երկրորդ կենտրոնական տիպն է Արեղան. երազուն, տպաւորուող «հեզ», «խոնարհ», սրտի և մտքի թափ ունեցող մի երիտասարդ, որը գտնւում է Վանահօր ուժեղ ազդեցութեան տակ: Սեղայի հետ պատահած դէպքից յետոյ նա հիմնական կերպարանափոխութեան է ենթարկւում. հոգու մէջ ուժեղ տատանումներ են ստեղծւում. նա մինչև պիեսայի վախճանը ցոյց չի

տալիս ուժի, կորովի, հոգու թափի և ոչ մի ապացոյց: Նրա հոգու առաջ դանազան պատկերներ են յառաջանում և նա բուռն-ապէս ընկնում է անկեղծօրէն այդ պատկերացումների ազդեցութեան տակ: Երբ յիշում է իր անցեալը, զգում է իրան մեղքի ծովի մէջ, և ծունկ է շոքում խաշի առաջ և դառնագին ողբում. «Ես կորուած մեղաւոր մըն եմ, փրկէ ինձի, տէր»: Երբ նրա հոգու առաջ Սեղան է պատկերանում, ուզում է նրա սաքերի տակը ընկնել և իր աշխարհային սիրոյ զգացումների ապացոյցները տալ: Հեթանոսական մեհեանը մանելիս անդամ անվճռական է և տատանումների մէջ. մեհեանի մուտքի մօտ իրան կրեացող Սեղային խնդրում է, որ իր տառապանքներին, կասկածներին վերջ տայ:

Այսպիսի ուժեղ տառապանքներից ու կասկածներից յետոյ վերջապէս իրեն ձգում է կեանքի ծովը՝ ամբողջ պիեսայի ընթացքում երկրորդ վճռական քայլն անելով:

Արեղան զգացումներով հարուստ, բայց անվճռական, տալաւորուող, տատանուող մի անձնաւորութիւն է: Նա անփորձ է, կեանքի բազմակերպութիւնը նրան անձանօթ, ուստի և այդքան տատանումները հասկանալի: Այն՝ ինչ Վանահայրը մի վայրկեանում էր վճռում և գործի անցնում, նրա համար ներքին երկար աշխատանքների առիթ էր դառնում: Հեղինակը Արեղայի մէջ պատկերացրել է թերահաւատի, կասկածը հոգին ընկած մարդու ներքին աններդաշնակ և իրար հակասող ապրումների հոգեբանութիւնը:

Իրենց հոգու կառուցուածքով Վանահայրը և Արեղան տարբեր տիպեր են. մի կողմ թողած աշխարհահայեացքը, զգացումների խնդրում մանաւանդ երկուսը իրար հակապատկեր են. մէկը գերադասում է մտքի, զուտ կրօնական ներքին կեանքի և զգայութիւններից ազատ զգացումները, իսկ միւսը կռուի, փոթորկի, զգայարանքների, մարմնի, արտաքին գեղեցկութեան և աշխարհային սիրոյ զգացումները:

Այս երկու տիպի հոգեկան մի քանի անցումների մասին հեղինակը պարզ պատկերացումներ չի տալիս, որով ընթերցողին որոշ շփոթութեան և կասկածանքների մէջ է թողնում:

Վանահայրը մինչև իշխանուհու հետ խօսելը պատկերանում է ընթերցողին իբրև մի կրօնական մարդ, որը իր հոգուց հանել է ամեն մի աշխարհիկ բան. անցեալ յուշերը, ուրախութիւնը, արխրութիւնը: Այդ հիմամբ յանդիմանում է իր միտքանակիցների անտիապաշտութիւնը, գարձի է հրաւիրում իր մոլորուած Արեղային: Սակայն իշխանուհու հետ խօսած ժամանակ և նրանից էլ յետոյ, պարզում է, որ նրա մէջ ծածուկ, բայց իրեն շատ պարզ յայտնի աշխարհային զգացումներ է ունեցել դէպի այդ կիներ, որ

ժամերով նստել է նրա կողքին և յատակագծին նայելով՝ քաղցր երազներ ունեցելը Լենթերցողը ակամայից արամադրուում է ընդունել, որ այդ մարդը այդ բոպէներին ոչ թէ եկեղեցու շէնքի մասին պէտք է որ մտածած լինէր, այլ այն կնոջ, որը իր մօտ նստած՝ իր մէջ եղած սիրոյ կայծերն էր բորբոքում:

Ինչպէ՞ս հաշտեցնել այս գրութիւնը առաջին վիճակի հետ, չէ՞ որ նա ոգևորուած և խորին անկեղծութեամբ աշխարհի, զգացումների և բնազդների գէճ էր խօսում, խաշի էութիւնն էր բացատրում. միթէ՞ անկեղծ չէր նա, միթէ՞ նրա լեզուն չէր խօսում այն, ինչ կար իր սրտի մէջ: Ուրեմն իր սրտի մի անկիւնում տեղ էր տուել սիրոյ զգացմանը, հաշտուել էր այդ գրութեան հետ, իսկ ուրիշներին առում էր, որ այդ բանը պէտք է սրտից հանել: Պիեսայի ընթացքում Վանահօրը իրրեւ անկեղծ մի անձնաւորութիւն է պատկերացրած. այս աններգաշնակութիւնը չպէտք է լինէր, որպէ՞ս զի տիպի ամբողջացումը և նրա հոգու մասին ստացուելիք պատկերացումը ներգաշնակ լինէր: Հեղենակը ցանկացել է իր երկու տիպերի մէջ պատկերացնել մարդու հոգու մէջ գոյութիւն ունեցող երկու կողմերի՝ զգայականի և հոգեկան բարձրի կոխը: Այս մտքի ներկայութիւնը երևում է նաև Վանահօր հոգեկանի նկարագրի ժամանակ, սակայն այստեղ պարզորոշ չի զարգացրած հոգու այդ երկու գրութիւնների իրար դէմ ունեցած պայքարը: Զգայականը այնքան թոյլ է արտայայտած Վանահօր մէջ, որ այն տպաւորութիւնը չի թողնում, թէ հոգու այդ ճնշին ուժը կարող է մրցութեան ելնել Վանահօր վերացական իդէաների սիստեմի դէմ, թէև հեղինակը ցանկացել է Վանահօր հոգու մէջ ևս դուռ լիզմ գնել: Վանահօր հոգու թէ այդ դուռլիզմը և թէ վերելքը շատ յաջող չի տուած, ուստի և ստացուելիք տպաւորութիւնը մասամբ թուլանում է:

Իշխանուհու հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ Վանահօր հոգին մեծ փոփոխութեան է ենթարկուում: Նա սիրում էր այդ կնոջը ծածուկ իր սրտի մէջ. երբ այդ մասին առաջին անգամ խօսք եղաւ, նա սարսափեց և հրաժարուեց պատասխանել այդ զգացմանը: Երբ իշխանուհին կտրուկ խօսքերով նրան նեղն էր ձգել, սպասում եւ, ահա կխոստովանուի և կզիջի, բայց երևում է ձերմակաւորը և յիշեցնում իրենց հին խօսակցութիւնը. սրանից յետոյ Վանահայրը կտրուկ մերժում է իշխանուհու սէրը: Այդ ներքին տատանումները, ներքին կոխը և յօդուտ կրօնականի վճիռը աւելի ուրիշի պէտք է կատարուի և պատկերացուի ընթերցողի առաջ: Այդ տեսարանից յետոյ մենք գտնում ենք նրան արդէն մի այլ նոր շրջանում. եկեղեցին պէտք է քանդել և նոր ձևի եկեղեցի շինել հոգու մէջ: Ինչպէ՞ս անցաւ Վանահայրը այդտեղ, հոգու ճրպիտի տա-

ապանքներով, անկումներով ու վերելքներով, մեզ համար չի պարզուում: Թոււմ է, որ հոգեկան վերլուծումներ սիրող անհատը հէնց պէտք է հետաքրքրուէր հոգու այդ կրիզիսի նկարագրութեամբ, որովհետև հէնց գրամատիզմը այդտեղ է արտայայտուում: Հեղինակը մեզ տալիս է, թէ այս նոր շրջանում ինչ եզրակացութեան է հասել նա, ինչ նոր բան է քարոզում, սակայն չի տալիս հոգեկան անցումները և այդ անցումների ժամանակ անհատի հոգու արտաքին վարագոյրի ետեր տեղի ունեցող հոգեկան առապանքները: Հէնց այդ պատճառով Վանահայրը շատ ուժեղ չի ազդում ընթերցողի վրայ:

Արեղայի, ճգնաւորի և Սեղայի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ ընթերցողը տրամադրոււմ է ընդունելու, որ սէրն է այն անմիջական—աէալ տպրումը, որի միջոցաւ կարելի է սկեպտիցիզմի գրկից ազատուել: Արեղան սիրոյ մասին իր սրտի գեղումները յայտնելուց յետոյ, էլի մնում է այնպիսի մի երազական վիճակի մէջ, որը յատուկ է պարսկական միսաիկ բանաստեղծներին. արթուն և երազական վիճակները չի կարողանում իրարից տարբերել և այդ ուղղութեամբ այնքան է ոգևորոււմ, որ մտածում է լրջօրէն, որ գուցէ մարդը ժայռի վրայ բուսած մի սունկ է, որը քնի մէջ երազում է, թէ ինքը վանական է և եկել է սունկ հաւաքելու: Այս տարտամ, անկայուն վիճակի մէջ էլ փակոււմ է այդ տեսարանը: Եկող դէպքերի ժամանակ Արեղան նորից եռանդուն է դառնում, նորից է դէպի իրական կեանքը մղոււմ, սակայն ընթերցողի համար բոլորովին չի պարզոււմ, թէ նա ինչպէս դուրս եկաւ այն ծանր երազական վիճակից, որի մէջ տապալկոււմ էր: Հոգեկան անցումները թերի և անկատար են և թոխչքներով կատարած, որը խանգարում է հոգեկան կեանքի դարգացման յաջորդականութեան պարզ ըմբռնմանը: Կամ անհրաժեշտ չէր, որ Արեղայի երազականութիւնը այդքան ուժեղ կերպով դարգացած արտայայտուէր, կամ եթէ այդպէս է հարկաւոր եղել, անցումները աւելի պարզ պէտք է լինէին:

Յաջորդ տեսարանների ընթացքում սիրոյ զգացումներից Արեղան անցնում է կուսի, յողթանակի, անդիջողութեան, նիստէական դերմարդու իդէաներին. ինչո՞ւ, ինչպէս, սրտեղից տեղի ունեցաւ անցումը. ինչպէս նա մի տպրումից անցաւ բնականօրէն միւսին՝ այդ չի պարզոււմ ընթերցողի համար: Հեղինակը օգոււում է սիմբոլի ըմբռնման իր իւրայատուկ եղանակից. պատկերները իրար կողք-կողքի է դնում. երբեմն մէկից միւսին անցնելը լինում է բնական, օր. սկեպտիցիզմից դէպի երազի փիլիսոփայութիւնը. իսկ երբեմն աններդաշնակ:

Իր նպատակներին հասնելու համար հեղինակը Արեղային

մշտական երազանքների ու դառանցանքների մէջ է պատկերացնում: Ընթերցողը հեշտութեամբ այն եզրակացութեան դալ կարող է, որ Արեղան հոգեկան մի հիւանդոս անձնաւորութիւն է, որովհետեւ նրա բոլոր արարքները, տառապանքները, ցանկութիւնները կապուած են լինում զանազան հարուցիմացիաների հետ: Շատերը քննադատներից պնդում են, որ Արեղան հիւանդոս էր և այդ հիմունքից էլ պէտք է բացատրել նրա արարքները և մըտքերը:

Անկասկած հեղինակը այդպիսի մտադրութիւն չի ունեցել. նրա համար Արեղան մի նորմալ, առողջ երիտասարդ է. այն բոլոր դէպքերը, որ տեղի են ունենում նրա հետ, խկապէս նրա մըտքերը, երազները, հոգու պատկերացումներն են, որը հեղինակը առարկայացած է տալիս, որպէս զի այդ անբնական եղանակով ընթերցողին վերահասու դարձնէ Արեղայի ներքին կեանքին: Սակայն այն եղանակը, որը նա ընտրել է, խնդրի այնպիսի յաջող ձևակերպումն չէ, որպէս զի ընթերցողների համար միաձև նշանակութիւն ունենայ: Եթէ գրականագէտներից ոմանք այդպէս սխալ են ըմբռնում սիմբոլիկ պատկերների այդ շարանները և սխալ գնահատութիւններ տալիս, ապա հասարակ ընթերցողների համար աւելի ևս թիւրիմացութեան դռներ կարող է բանալ այդ ձևակերպումը:

Բայց ինչո՞ւ է հեղինակը Արեղային տեսիլքների մէջ դուրս բերել. ինչո՞ւ նա կարծես մի մշտական տաքութեան մէջ եղող անձն է պատկերացնում Արեղային: Շատ պարզ է. Արեղայի շուրջը գործողութիւն, իրական սէալ ապրումներ չկան: Վանասայրը մի բնական տիպ է, նրա արարքները, մտածումները, ներքին աշխատանքները բնական ձևերով տեղի են ունենում ընթերցողի առաջ, որը զգում է, որ իր դէմ մի իրական տիպ է ապրում: Արեղայի համար հեղինակը չի կարողացել այդ սէալ կեանքը ստեղծել. նրա կողքին չկայ իրական Սեղան, ինչպէս Իշխանուհին Վանասոր մօտ, որի հետ նա ունենար սէալ, բնական հարորդակցութիւն հոգու, ցանկութիւնների և ձգտումների: Այս դէպքում թիւրիմացութիւնների տեղիք չէր կարող տալ Արեղայի անձնաւորութիւնը. նա դուրս կրգար Վանասոր հակադասակերը բնականօրէն այլ ապրումներով: Ի՞նչը կխանդարէր, պիտեայի հիմնական իդէան ինչո՞վ կփռատուէր, որ. եթէ Սեղան իբրև մի սէալ, իրական աղջիկ պատկերանար, որը մնար կղզու վրայ որոշ օրեր, լինէր տեսակցութիւններ Արեղայի և նրա մէջ, լինէր իրական սիրոյ ապրումներ, կարծիքների փոխանակութիւններ և այլն: Այս նկարագիրներից յետոյ էլի կարող էր հեղինակը Սեղանոյ կղզին լցնել Արեղայի երեակայութեան համար իրական միզանուշներով, հովիկներով, Սեղայի պատկե-

բացմամբ: Հեղինակին յաջողուել է Վանահօր տիպի համար իրական ֆոն ստեղծել, իսկ Արեգայի համար այդ բանը տեղի չի ունեցել. նա չի կարողացել մի սէալ կեանքի շուրջը մշակել երկու տիպերի ապրուստները և բաղխուսները: Փոնի այդ բացակայութեան պատճառով Արեգան դարձել է վիզիօնէր, հիւանդոտ, զգայարանքները ծայրայեղօրէն գրգռուած մի անձնաւորութիւն, որը երազում է, բայց չի ապրում իրականօրէն: Արեգան, կարծես, ինքը չէ ապրում, ինքը չէ մտածում, այլ գէտերը գալիս են և նրան իրանց հետ քաշ տալիս գէտի առաջ: Նրա երեակայութիւնը նմանում է տաքութիւն ունեցողի թռիչքներին, որոնք շեն ենթարկւում ընտրող և սահմանների մէջ պահող ու վերահսկող գիտակցական եսին և բանական կամքին:

Այս երկու տիպերի հոգեկան զարգացումը, գիտակցութեան յորձանքը ընդհանրապէս յաջող չէ տարած: Հեղինակը յանախ վարպետութեամբ նկարագրում է հոգեկան կեանքի վայրկեանները հատիկ-հատիկ տեսարանների մէջ, սակայն այդ տեսարանների ներքին ձուլուածքը և անցումները նոյն յաջողութեամբ չի կատարում: Հոգեկան կեանքով հետաքրքրուող մի պիեսայի համար դա արդէն զգալի պակասութիւն է: Հեղինակը անպայման հոգեկան կեանք գիտելու կարողութիւն ունի, սակայն իր այդ ընդունակութիւնը գեա լիակատար ծաղկած վիճակում չի ներկայացրել այս պիեսայի մէջ:

Որոշ շափի թուլանում է հերոսների ազդեցութիւնը ընթերցողի վրայ նաև այն պատճառով, որ այդ տիպերը զանազան բացատրութիւնների առիթ են դառնում. նրանց մի վարմունքը ընթերցողը չի կարողանում միակերպ բացատրել. պիեսայի զանազան տեղերը յօգուտ տարրեր ենթադրութիւնների ազդեցոյցներ են ծառայում և այդպիսով նրան թիւրիմացութիւնների մէջ ձգում: Ամեն մի գեղարուեստական երկ պէտք է պարզ, որոշ և առանց մտի կամ հակասական ենթադրականների ազդէ ընթերցողի վրայ, այլապէս կ'իթուլացնէ իր ազդեցութիւնը: Հին Աստուածները մի այնպիսի փիլիսոփայական գեղարուեստական խորը գրուածք չէ, որպէս զի արդարացնելու հնարաւորութիւն ստեղծուի փիլիսոփայական խորութիւնը պատճառ բռնելով: Հին Աստուածները աչքի է ընկնում ընդհակառակն փիլիսոփայական իր անսահման պարզութեամբ, իսկ այդպիսի երկը մանաւանդ տիպերի պարզ և առանց բազմազան բացատրութիւնների տեղիք տալու հանդամանքով պէտք է ազդէ ընթերցողի վրայ: Այս պիեսայի շուրջը մեր գրականութեան մէջ տեղի ունեցող բազմազան վէճերի գլխաւոր պատճառներից մէկն էլ այն է, որ գրուածքի հերոսները բազմակերպ բացատրելի կողմեր ունին:

Մի քանի խօսք էլ ձերմակաւորի սիմբոլի մասին: Առաջին տեսարանը բացում է նրա և Վանահօր խօսակցութեամբ. թւում է, որ այդ տեսարանը միանգամայն աւելորդ է և ոչինչ չի աւելացնում ընդհանուր ընթացքի վրայ. այդ տեսարանը մի տեսակ մեծ անփիշայի տպաւորութիւն է թողնում, որը յայտնում է բաւականին թոյլ կերպով, թէ թատրոնի ներսում ինչ բան պէտք է կատարուէ: Այդ տեսարանը կարող է վերացուել բոլորովին. ինքը գրաման, ինքը գործողութիւնը պէտք է ցոյց տայ ձերմակաւորի և Վանահօր կռուի բովանդակութիւնը և ոչ թէ այդ նախարանը, որը ընթերցողին ոչ լարում է ապագայի համար և ոչ էլ սերտօրէն կաշոււմ ընդհանուրի հետ:

Ինաւորութեան հիմնական տարրերից մէկն է նաև մարդու համազումները, իդէալները, աշխարհահայեացքը: Վանահայրը և Արեղան մանաւանդ այս խնդրում տարրեր մարդիկ են:

Վանահօր աշխարհահայեացքի հիմունքները հետևեալներն են: Աստու տանարի մէջ թաղաւորում է միայն հողին և նրա շունչը: Զարը, անբարոյականը հիմնում է բնազդների և մարմնականի վրայ: Այն մարդը, որ տիրապետել է իր մարմնին և բնազդներին, նրա համար շարը գոյութիւն չունի, մանաւանդ եթէ իր շղթաները աշխարհի, իր անցեալի, իր յուշերի, վշտերի և ուրախութիւնների հետ կտրել է արդէն: Վանահայրը արհամարհում է աշխարհը և նրա յատկանիշները, սակայն գիջում է նրա գոյութեան իրաւունքը որոշ կարգի մարդոց համար սակով. «Ով մարդ է և միայն մարդ՝ անխկա աշխարհինն է և թող դառնա աշխարհին»:

Վանահօր իդէալական մարդու շտաբը պէտք է «վեր ըլլա, քան մարդը»: Այդ գերմարդը բնութեան տուեալներից չի կազմակերպում իր կեանքը, նա չի շարունակում բնութեան տուեալները, այլ ներքին խորասուզումների, մտքի տիրապետութիւնների միջոցաւ իր մէջ մի նոր էութիւն է ստեղծագործում, որը շատ կողմերով նոյն իսկ դէմ պէտք է լինի բնական տուեալին: Այս իդէալական վիճակի հողու մէջ չկան «կրքեր», «բնազդներ», այլ միայն սուրը հողին, միայն դէպի ճշմարիտը, դէպի Աստուածը վեր խոյացող միտքը: Այս բոլորը Վանահօր այն հայեացքներն են, որ ունէր իշխանուհու հետ ունեցած բացատրութիւնից առաջ:

Այդ խօսակցութիւնից յետոյ Վանահայրը աւելի է խորանում, միակողմանի դառնում վերոյիշեալ մասածումների մէջ: Պէտք է նոր եկեղեցի շինել, սակայն ոչ թէ քարերից, ինչպէս առաջ էր շինում, այլ բանականութիւնից, կամքից և հաւատից և որը հողում

պէտք է տեղատարուած լինի: Այդ եկեղեցուն կարելի է հասնել ներքին անդուլ, անկաշկանդ աշխատանքով ու որոնումներով:

Այդ ներքին կատարելագործութիւնը սահման և վերջ չունի. ոչ մի քրիստոնեայ չի կարող հալարաանայ, թէ իր ներքին եկեղեցու շինուածքը աւարտած է. քանզի նա շինելը հիմնական յատկութիւնն է ներքին աշխատանքի:

Այդ ներքին ինքնամփոփման ժամանակ հոգին մի արտասովոր գրութեան մէջ է ընկնում. նրա համար գոյութիւն չունի ոչ մէկ արտաքին յուզում, ոչ մէկ արտաքին ազմուէք, այնտեղ արևի ու աշխարհիկ կեանք չկայ:

Ինչպէս հասցնել մարդուն այդ վիճակին: Վանահայրը այն համոզմանն է, որ մարդուն չի կարելի հասցնել այնտեղ. մինչև իր կեանքի առաջին շրջանը կարելի է մարդուն օգնել հասնելու, բայց ճշտակէ անդին մարդ ինքը պիտի երթաւ: Երբ մարդը ուզում է իրենից վեր լինել և կարուել բնութիւնից և հոգին մի ուղղութեամբ զարդացնելով սուզուել Աստուէութեան մէջ, այնտեղ արդէն ուրիշը, զուէն չպէտք է խառնուէ. այդ սրբութիւն սրբոցը մաքուր պէտք է մնայ ամեն մի արտաքին միջամտութիւնից, որը նայն իսկ այդ դէպքում անօգուտ է: Վանահայրը դառնում է մի մեծ անհատամուլ:

Այսպիսով հոգին մի արտասովոր լարուած վիճակի է հասնում: Մարդու ողջ էութիւնը բաժանուած է երկու հիմնական մասերի—զգայականի և ազատ հոգեկան կեանքի: Առաջինը ենթարկւում է արհամարհանքի, իսկ երկրորդը ոգևորութեան առարկայ է դառնում: Մակայն հէնց այս մասը միակողմանի ըմբռնման և գնահատման է ենթարկւում. հոգեկան ասելով Վանահայրը ըմբռնում էր նրա որոշ կողմը միայն—զուտ կրօնական աշխատանքը: Արտաքին բնութիւնը, այլ մարդիկ, անհասի պարտականութեան գիտակցութիւնը գէպի շրջապատը ոչնչացման է ենթարկւում:

Վանահօր փիլիսոփայութիւնը միակողմանի է: Վանահօր փիլիսոփայութիւնը գնահատելի է այն կողմից, որ այնտեղ ուշադրութեան է առնւում հոգու ներքին կեանքը, խորն ապրումները, ներքին անդուլ աշխատանքը: Զգայականութեան գիմաց դնում է զուտ հոգեկան արժէքներ, հոգու ներքին կատարելագործութեան խնդիրը. միմիայն զգայականութեամբ հոգին չի կարող երկար ժամանակ բաւարարուած սպրել: Այս գնահատելի կողմի հետ այդ փիլիսոփայութիւնը ունի շատ պակասաւոր մի կողմ. արտաքին աշխարհը, մարմնի կարիքները, մարդու իրական-բնական կեանքի գնահատելիութիւնը ոչնչացման է ենթարկւում: Ինչպէս անհնար է զուտ զգայական կեանքով բաւարարուելը, նայնպէս և անհնար է միմիայն ներքին խորատուզումներով մշտապէս կերակրել մար-

դու մարմնի մէջ լուծուած հոգին: Ճնշել, սջնշացնել զգայարանա-  
կանը. նշանակում է սջնշացնել նաև հոգու բարձր կեանքի երևոյթ-  
ները: Այսպիսի մի փասնդ անպայման գոյութիւն ունի Վանահօր  
փիլիսոփայութեան մէջ:

Վանահօր դուռ հոգեկանի փիլիսոփայութիւնը պակասաւոր է  
նաև այն կողմից, որ ներքին խորասուզումներ ասելով հասկա-  
նում է միմիայն անհատի յարաբերութիւնը Ասածու հետ, եւսի  
ձուլումը գերբնականի հետ: Մետաֆիզիկ խնդիրների կարիքը  
որքան էլ ամեն մի անհատի համար անհրաժեշտ կարող է նկատ-  
ուել, սակայն նա հոգեկան միակ կարիքը չէ. ներքին խորասու-  
զումներ կարող են համարուել նաև գեղեցկութեան, անհատական  
կեանքի այլ և այլ վիճակների, սոցիալական խնդրի, գիտական  
հարցերի մասին եղած հոգեկան դադանի աշխատանքները:

Վանահօր փիլիսոփայութիւնը աշխարհիկ չէ ըստ իր բովան-  
դակութեան և մանաւանդ ըստ իր հետեանքի, որովհետև այդ աշ-  
խարհահայեացքից զրդուած նա ստիպուած խոյս է տալիս կեանքից  
յօգուտ անհատական ազատութեան: Ճիշտ է այն կարծիքը, ըստ  
որի մարդը միշտ էլ համայնքի մէջ չպէտք է կատարէ իր հոգու  
կատարելագործման ախտերը, այլ նրա համար որոշ բաներ պէտք  
է ներքին մասնաւոր սեպհականութեան ազացոյցներ ծառայեն,  
սակայն այդ դուռ անհատական ներքին աշխատանքի և արժէք-  
ների հանդամանքը չպէտք է առիթ գտնայ ծայրայեղ անհատա-  
կանացման և ինքնամոտման, ինչպէս այդ տեղի է ունենում Վա-  
նահօր մօտ:

Վանահօր փիլիսոփայութիւնը միակողմանի լինելուց դատ-  
անորոշ է և թերի: Նա մի քանի անգամ է պարզում իր ծրագիրը,  
սակայն այդ պարզարանումներից շատ բան չի լուսարանուում: Նա  
ասում է, որ մարդը մենակ պէտք է աշխատէ իր ներքին եկեղե-  
ցու կառուցուածքի համար և իր գլխաւոր ուշքը դարձնէ դէպի  
անդրբնականը, սակայն չի պարզում, թէ ի՞նչ է ներկայացնում  
այդ անդրբնականը, ինչպէս է նա արտայայտուում մարդու հոգու  
մէջ, ի՞նչ յատկութիւններ ունի այդ վերինը և ճշմարիտը: Վանա-  
հայրը խօսում է հոգու մի քանի դրութիւնների մասին առանց  
պարզարանելու նրանց էութիւնը կազմող կոնկրետ պատկերա-  
ցումների, որակների յատկանիշները: Սա արդէն մեծ պակասու-  
թիւն է, որը խանգարում է Վանահօր տիպը և էութիւնը լուս հաս-  
կանալու գործին: Վանահօր պէս կրօնական տրամադրուած ան-  
հատներն անգամ չեն կարող նրան իդէալ դարձնել, իր դէպի  
անորոշը ու միստիքականը գնացող մութ տրամադրութիւնների  
և ըմբռնումների պատճառով:

Վանահայրը քրիստոնեայ է իսկական մտքով և ոչ: Իր վեր-

ջին շրջանում մտնում է մի քանի խնդիրներում իսկական քրիստոնէական տեսակէտին: Բարոյականի մէջ գնահատում է մտախենքը, գործողութեան շարժառիթները, քան գործողութեան հեռանքների օգտակարութիւնը: Մեծածախս եկեղեցին արդէն պատրաստ է և լաւ պայմանների մէջ դրուած, սակայն Վանահայրը ցանկանում է ոչնչացնել այդ, որովհետև շինութեան յառաջացման պայմանը, շարժառիթը իր հասկացողութեամբ եղել է անբարոյականը, անմաքուրը: Գործի մտախեն է խնդիրը, նա պէտք է ըղիւէ բարոյական գիտակցութիւնից: Այս տեսակէտը զուտ քրիստոնէական է:

Վանահայրը մի այլ խնդրում ևս զուտ քրիստոնէականին է մտնում. նա քարոզում է, որ անհատը իր հոգու մէջ անկախօրէն կերտէ իր հաւատքի կայարան—եկեղեցին, ինքը անկախօրէն աշխատէ իր ինքնակատարելագործութեան համար և անմիջօրէն յարարելութեան մէջ մտնէ իր Աստու հետ: Քրիստոսի ուսմունքի մէջ այս տրամադրութիւնը անպայման գոյութիւն է ունեցել և ունի:

Վանահօր բացարձակ ինդիւիդուալիզմը, այլ անհատներին բարոյա—կրօնական կատարելագործութեան կիսամանապարհին թողնելը, իր ետից գործն այլ աշխարհ չճանաչելը, գծուար թէ անպայմանօրէն ըղիւէ բուն քրիստոնէութեան էութիւնից: Վանահայրը քրիստոնէական իղէաների այն միակողմանի ըմբռման ներկայացուցիչն է, որը իր տիպիկ արտայայտութիւնը գտաւ միջին դարերում: Չպէտք է մտանալ յիշելու նաև այն, որ ճգնական, աշխարհը արհամարհելու և նրանից խուսափելու և ինքն իր մէջ սուղուելու տրամադրութեան համար քրիստոնէութեան մէջ որոշ տուեալներ կային, այլասէս անհետք է պիտի լի: Թէ միջնադարեան կրօնական և ճգնական ըմբռումները բացարձակօրէն սխալմաքի և թիւրիմացութիւնների վրայ էր հիմնուած:

Վանահայրը իսկապէս մեր ներկայ կեանքից վերցրած մի քննական տիպ չէ. նրա համոզումների, տրամադրութիւնների, կրօնական ըմբռումների ներկայացուցիչներ մեր կեանքում շատ քիչ կան: Այստեղ—այնտեղ պատահում են որոշ կեղծերից Վանահօրը փոքր շափերով մտակցող անհատներ, սակայն այդպիսի լիակատար ծաղկման հասած տիպեր շատ քիչ կան այժմ: Կրօնական հարցը մեր ժամանակում դադարել է այն միասնական շրջանները մացնելուց, ինչպէս Վանահօր մօտ. ներկայի կրօնական տեսակէտից ամենապահպանողական մտածողն անդամ դրաչարանքների, մարմնական պահանջների և արտաքին բնութեան արժէքաւորման մասին չունի այն համոզումները, ինչ ունի Վանահայրը: Վանահայրը իր հոգեկան որակային կազմով դադարել է այժմ համարեա գոյութիւն

ունենալուց, սուտի և նա ժամանակակից ունի և հասարակույ միտիս չէ:

Փամանակակից տիպ չլինելով՝ սակայն նա պատմական տիպ է: Միջին դարերի իսկական ներկայացուցիչ մարդը ունի, Վանահօր հոգուց շատ մասեր: Մեր միջնադարեան տիպիկ մասիկ քանաստեղծ Գրիգոր Նարեկացին Շանթի Վանահօր նախատիպն է:

Զգիտեմ հեղինակը Վանահօր տիպը կերակրիս ի նկատի է առել Գրիգոր Նարեկացու հեռուայ խոսքերը, զէպի ուր վերջ ի վերջոյ ձգտում է Վանահայրը. «Հեծե՛ծո՛ղ սրտիս հառաչանքների ձայնը, ողբերի աղաղակը Քեզ և՛մ վերջնձայում, սրտազէտ Աստուած, և խորտակուած մարիս ճենճերո՛ղ իղձերի սրտո՛ղ՝ թախձութեան կրակով տաշորուող անձախ, առաջնո՛ղ և՛մ դնում ու կամքիս քուսփասով Քեզ վերադարձու:»

Իսկ Գու, Ողորձած Տէր, նայիր նրա վրայ, հաստաիր այն աւելի՛՛ քան ըտրդ-ըտրդ ձխով Քեզ մասուցուող քայրապատու դատարար:

Հանութեանը՝ այլ ոչ բարկութեանը՝ բնորոնի բակաւ խոսքերիս հիւսուածքը, քանական դո՛ւրս յօժարական այս նուէրը՝ գարարա ճարպիս սղձակիզող ուժովը, զդայական խորձուրդներ ունեցող սենեակիս այն խորութիւնիցը թայ ելնի և Քեզ համբար:

Ահա մի մարդ, որ զգում է իր քանական անկասարութիւնը, իր զդայական բնույթը և իր նկրթին կեանքի տատապանքները դնում է իր Աստուած առջ և անմիջական կերպով կուզում նրա հետ և ինտրում նրան, որ իր սրտի հառաչանքները, իղձերը աւելի ուշայրու՛թեան անձ, քան սոսրական պատարարը Միթէ նայնը չէ իր էութեան մէջ Վանահայրը: Վանահօր մօտ զգացումների այնպիսի թափ և խորը անկեղծութիւն չկայ, ինչպէս Նարեկացու, որովհետև Նարեկացին անկեղծօրէն այդ բոլորը զգացել է, ապրել և արտայայտել: Իսկ Վանահօր սակզիչ Շանթը այդ սեռակի զգացումները չի ապրել անմիջօրէն, այլ միայն իր մարի մէջ է պատկերացրել պատմական սնցեան ու այնուհետև կերակր իր հերոսի տիպը, որը դուրս է եկել մի փոքր աւելի թույլ և մտածական, քան անկեղծ և անմիջական՝ ինչպէ՛ս Նարեկացին:

Այս բոլոր հանգամանքները միախառնուելով Վանահօր ազդեցութիւնը թուլացնում են, ընթերցողը չի կարողանում այնպէս ապրել, սեպականացնել նրա հոգու ելեկէջները, ինչպէս Արեղայի՛նը: Վանահայրը մեզ օտար տիպ է, մեզ հետաքրքրում է նա, մտածողական հոգու մէջ է պատկերանում առանց խորը կերպով զգացումների աշխարհի մէջ ձուլուելու:

Գր. Ա. «Վանահայրը և Նարեկացին»

Արեղայի փիլիսոփայութեան և արժէքների տեսութեան հիմունքները այլ են. նա միանգամից չի հասնում նոր արժէքների սխալեմին, այլ աստիճանաբար և հոգու երկար տառապանքներից յետոյ. իսկապէս այս բոլորը նա ապրում է և ոչ հանդիսա դոցա մասին մտածում և ընտրում: Արեղայի փիլիսոփայութիւնը կարծիքսքով կարելի է ասել զդաշարանքների փիլիսոփայութիւն է: Հեղինակը որպէս զի իր կենդրոնական տիպերին աւելի բացորոշ արտայայտէ, երկսին էլ դնում է իրենց բնօրին համապատասխան երկու իրար հակադասակեր կեանքի մէջ:

Մարդկութեան մի մասը ապրում է զդաշականի և արտաքին աշխարհի փայլի մէջ, ունենալով բարոյականի և աստուածայնի մասին իր ուրոյն, ներկայի մաքով ասած՝ «աշխարհիկ հայեացքները»: Աշխարհիկ կեանքի ձերունին ասում է. «կեանքը ուրախութեան համար է տուած մեղի», ուստի և որոշում է, թէ կինքը ձեր է, բայց պէտք է ուրախ և դո՛ն ապրէ կեանքը լիակատար վայելելով:

Միւս կեանքի ներկայացուցիչ ձերունու կարծիքով. «կեանքը խաչ մըն է, որ պիտի կրենք մեր ուսին, մինչև տէրը կանչէ մեզի»: Իսկ այդ կեանքի երիտասարդ վանականը պնդում է նոյնը այլ խօսքերով. «Մէյ մը ատոնց (աշխարհի մարդոց) հարցնող ըլլա՛նով մարդ, ի՞նչ ես գտել այդ ձախողութիւններու, այդ տաժանակիր աշխատանքի, այդ կարօտութիւններու, այդ կուսին ու դառնութեան հովաին մէջ, որուն աշխարհք անունը կու տան: Այդպէս էլ յիմար հաշիւ: Քանի մը խղճուկ վայելքներու, քանի մը շնչին հաճոյքներու համար մարդ ա՛նէ ու դո՛նէ իր հանդերձեալ կեանքի յաւիտենական երանութիւնը»:

Արեղան վանականների շրջանումն է մեծացել, աշխարհիկ կեանք բոլորովին չի տեսել: Սեղայի հետ պատահածը առիթ է դառնում, որ նա աստիճանաբար անցնէ աշխարհիկ կեանքի պաշտամունքին:

Արեղան իր այդ նոր շրջանում սկսում է սիրել ծովը, ալիքները, յուզումը, աշխարհային կոխը և սէրը: Իր հոգու մէջ լսում է միգանուշների քաղցր երգը.

«Մէրը սիրով,

սէրը սիրով,

օրէնքն աս է

գարկրով:»

Համեմատում է այս երանելի դրութիւնը իր ներկայի հետ և տեսնում, որ ինքը մոմի նման «զժգոյն և մինակ» սխալ է ու հալում:

Սիրոյ զգացումը նոր է արթնանում նրա մէջ. դեռ չի կա-

բողանում իր ողջ էութեամբ կնիթարկուել այդ նոր, զգացմանը: Նրա վրայ իջնում է անորոշութեան, յուսահատութեան արամազրութիւն, որը շատ սովորական է երիտասարդ սիրահարների մօտ:

Այս ուղղութեամբ զարգանալով ընկնում է խոր յոռետեսութեան մէջ. աշխարհի բոլոր՝ թէ աշխարհիկ և թէ եկեղեցական արժէքները նրան թւում են ունայն և օշինչ բաներ (ճգնաւորի տեսարանը): Մի վայրկեան ժիւտման փիլիսոփայութիւնը յաղթանակում է սիրոյ զգացմանը: Սակայն շուտով երիտասարդական տեմպերամենտը յաղթում է սառը դատողութեան: Տարիքի, զգացումների թափը հնարաւորութիւն է տալիս թռչելու ունայնութեան փոսի վրայից և դալու այն եզրակացութեան, որ հոգու երազական վիճակով կարելի է լցնել այդ փօսը: Եւ ահա յզացման այդ վայրկեանին լսում է երազող երիտասարդութեան օրհներգը.

«Իջէք, իջէք

երազներ.

Իջէք զգուշ

երազներ

շոյող, քնքուշ

երազներ»:

Ուշադրութեամբ ականջ գնելով իր ներքին ձայնին, նկատում է, որ երազների երգը Աեղայի սիրոյ երգն է, որ երազը հէնց ինքը սէրն է: Աէրը մարդու էութեան հմայքն է, մաքերի թաղուհին, սրտի ծովը, հոգու փոթորիկը, ծովերի յոյզը, արևի հուրքը: Նա մարդու զգայարանքներին բնութիւն է տալիս, սրտին՝ ծովի խորութիւն, կեանքին՝ թռիչքի թև: Նա մի շունչ է, որ մանում է «ախուր», «չոր», «մինակ» ապրողների հոգու մէջ և նրանց շարժուն և կենդանի կեանք տալիս: Աէրը կեանքի վեհագոյն երազն է:

Հետանալով վանական աշխարհաճայեացքից՝ Աքեղան իր նոր կեանքի համար հոգու ուժեղ տատանումների միջոցաւ երկու իրար հետ միացած արժէքներ է գտնում—սէր և երազ և դրանցով կարողանում է հոգու տառապանքների ժամանակ յառաջացած ունայնութեան փօսը լցնել:

Մեհեանի տեսարանի մէջ Աքեղայի փիլիսոփայութիւնը համնում է իր փախճանին: Կեանքը կռիւ է, անողոք, անդիջում կռիւ: Յաղթանակը մարդու վեհագոյն արժանիքն է. ով յաղթւում է, նա պէտք է հետու կենայ կեանքի վայելքի սեղանից: Կեանքի կռուի մէջ շպէտք է խնայել, պէտք է զարկել բոլոր գէժ և լնսող ներին. խնայելը թուլութիւն է, մեղքանալը՝ պարտութիւն: Աշխարհի կեանքը կռուի մէջն է, իսկ նրա վայելքը սիրոյ: Այդ վայելքի հիմնական միջոցներիցն են՝ «առողջ», «ճկուն», «ուժեղ», «քնքուշ», «հոյակապ մարմինը», «գինին», «արրեցումը», «հեշ-

տանքը», «գեղեցկութիւնը» և առ հասարակ բնութիւնը իր բազմակերպ արտայայտութիւններով:

Այս իմացութիւններից յետոյ ուզում է մզուել գէպի նոր անձանութներ, նոր աշխարհներ, նոր գոյութեան, նոր ձևերի, նոր էութեան և նոր կեանքի: Երիտասարդներին յատուկ անորոշ «նորեր» և իղէալներ:

Արեղան որոշ տեսակէտից կեանքի մի ամբողջական, բայց ոչ լիակատար ծրագիր ունի: Այդ նոր կեանքի հիմունքը զգայարանքը, կոնկրետ գրգիռները և պատկերացումներն են: Բոլոր զգայարանքներին և բնագոյներին բաւարարութիւն է տրուում առանց խտրութեան: Հոգեկան կեանքի վայելքը հիմնուում է զգայարանքների տուած տալաւորութիւնների վրայ: Արեղայի սէրը զգայական է, մարմնականի պաշտամունքը հիմնուած է աչքի և շօշափելիքի զգայութիւնների վրայ, գեղեցկութիւնը աչքի և տկանջի տալաւորութիւնների, գինին ծաշակելիքի օրգանի, բնութեան պաշտամունքը բոլոր զգայարանքների, կուիւր և յաղթանակը մկանների և կենդանական ուժի: Մա ոչ թէ հոգու, այլ զգայարանքների փիլիսոփայութիւն է:

Հոգեբանական-հասարակական տեսակէտից եթէ գնահատելու լինենք այս հայեացքները, ինչ եզրակացութեան կարող ենք գալ: Արեղայի աշխարհահայեացքը ծայրայեղ հակապատկերն է Վանատօր մտածումների, ինչ Վանահայրը չէր ուզում, Արեղան տենչում էր, ինչ մէկը ճշշիլ էր ուզում, միւսը այդ կողմը միակողմանիօրէն շեշտում էր:

Արեղան զգայական տալաւորութիւններ ու տալաւորութիւններ է պահանջում, դորա սակայն վերջ ի վերջոյ ձանձրոյթ և յոգնածութիւն կարող են յառաջ բերել մարդու մէջ: Պատկերացնենք մի կեանք, ուր մարդիկ խմում են, միշտ ուրախ են, միշտ սիրում են, միշտ գեղեցիկն են տեսնում և հիանում ճկուն ամարմիններով» և, իրենց հաճոյքը մեծապնակու և մկանները մարդելու համար կուում են: Այս կեանքը յաւագոյնը չի կարելի կոչել, որովհետեւ հոգին չի խորանում և սուղում իր էութեան մէջ աւելի բարձր և զուտ հոգեկան կեանքով ապրելու համար: Մշտապէս թափառել զգայական աշխարհի երեսին, մըտապէս ներքին կեանքը արտաքինը պատկերացնող վիճակում տեսնել, կարող է աստիճանաբար մանրացնել հոգին: Հոգեկանը այդ արտաքին գրգիռներից պէտք է այլ արժէքներ որոնէ և կազմակերպէ, որոնք ամբողջովին չեն տրուած արտաքին բնութեան մէջ, սակայն որոնցով կարելի է գնահատել արտաքին բնութիւնը: Ամեն բան վեր ածելով զգայականի և բոպէականի, կեանքը դարձնում ենք մանր և ոչ խոր: Արքան յաճախ անհատը

ճնշում է իր զգայարանքների ցանկասիրական թափը հոգու մէջ դոյութիւն ունեցող իղէաների հիման վրայ: Կուլտուրայի պատմութիւնից բազմաթիւ փաստեր կարելի է բերել, ցոյց տալու համար, թէ զգայարանքի միակողմանի կուլտը որքան կործանարար է անհաս մարդու և հասարակութեան համար:

Արեղայի կեանքի իղէալները ոչ միայն միակողմանի, այն նոյն իսկ որոշ կողմից մերժելի էլ են: Արեղան կռիւ և յաղթութիւն է երգում. ներդամտութիւնը, մեղքանալը թուլութիւն և բնաւորութեան պակասութիւն է համարում: Արեղան հայոց նիւտըն է: Կեանքը կռիւ է, այդ ճիշտ է. բայց հետաքրքիր է, ներկայ մարդկութեան բարոյական հոսանքների որ տակոսն է այդ անողորմ անդիշում կռիւը սաստուածացնում: Միթէ խղճալը, օգնական լինելը և ընկերականութեան զգացման վրայ ներդաշնակ գործունէութիւնը և փոխադարձ դիշուսները բարոյական տեսակէտից այնքան սնանկ դուրս եկան, որ անհնար դարձաւ նոր հորիզոններ որոնող Արեղայի փիլիսոփայութեան մէջ տեղ տալ նրանց: Կռիւը մի յաւիտենական երևոյթ է կենդանականի համար. նա ազատարար, մաքրող, զտող, մարդուն դէպի վեր բարձրացնող մի յատկութիւն է, որը պէտք է տեղի ունենայ նաև ապագայի հասարակական նոր ձևակերպումների իրականացման ժամանակ: Սակայն չի կարելի մերկ, ինքն իրան թողած և սոցիալական սկզբունքներից ազատադրուած, կենդանական ուժի և մկանների թափի հետ կապուած արարքը այնքան սիրուն լիզուով գովել: Այդ կռիւը մարդավայել ձևերի, կուլտուրականութեան պէտք է փոխել: Արեղան իր մկանների ուժով վայր գլորեց մի դօրականի և խլեց նրա սուրբ: Բայց միթէ չէր կարող ճէնց այդ հասարակութեան մէջ գանուել մէկը աւելի ուժեղ նրանից, որը նոյն վիճակի մէջ ձգէր Արեղային, մի ուրիշն էլ, որը Արեղային յաղթողին յաղթէր և այսպէս անվերջ, մինչև որ մէկը կմտար, որը կլինէր ամենից դօրեղը, ամենից ահարկուն: Բայց չէ որ ճէնց այդ ժամանակ բոլոր թոյլերը սոցիալական խմբակցութիւն կրկադմէին այդ ուժեղին տապալելու համար. իսկ այդ ժամանակ բնականօրէն նրանց մէջ կծագէր և կգորանար ընկերական մօրալը: Ահա մի հանդամանք, որը ուշագրութեան չի առել հեղինակը իր հերոսի իղէալները մշակելիս:

Արեղայի փիլիսոփայութիւնը սակայն մի շատ գնահատելի կողմ ունի. նա կարուկ կերպով շեշտում է զգայարանքների և զգայականի արժէքը անհաստատական հոգեբանութեան համար. նա փրկում է յունականը միջնադարեան ճգնաժամութեան ճանկերից: Զգայարանքները երկար դարեր կուռել են իրենց իրաւունքի համար. շատ դարեր նրանք յաղթուած են եղել Վանահօր ուղղու-

թեան մարդկանցից: Եղել են դարեր, երբ նրանք յարութիւն են առել տիտանական թափով, ինչպէս օրինակ վերածնութեան դարում:

Զգայարանականի արժէքը ըմբռնելու համար հարկաւոր է միայն թիֆլիսակի հայեացք ձգել մարդու հոգեկանի վրայ: Հոգաբարձր կեանքը հիմնուած է զգայարանքների վրայ. բարձր տեսակի զգացումները այսպէս թէ այնպէս հիմնուած են զգայարանական զգացումների վրայ: Զգայութիւնները նրբանայով դառնում են գաղափարներ, սկզբունքներ, օրէնքներ և բարոյական պահանջներ: Եթէ վերացնելու լինենք զգայականը, կրկուրանան գաղափարները, ասում է Կանտը: Զգայութիւնները մեր հոգին պահում են թարմ, գործունեայ, տպաւորուող, կենսուրախ, իսկ նրանցից զուրկ լինելը յուսալացնում է հոգու թառամութիւն: Ահա այս է Արեգայի պաշտպանած անողջ սկզբունքը, որը միշտ պէտք է գոյութիւն ունենայ, քանի մարդկութեան կուլտուրան անողջ է և հիւանդոտ երևոյթներից ազատ:

Ունի այս խնդիրը այժմէական նշանակութիւն մեր հայկական կեանքի համար. պատասխանը անկասկած դրական է լինելու: Իերմանական գրականութեան մէջ նոյն իսկ յանախ է ընթերցողը այն կարծիքին հանդիպում, որ ներկայի եւրոպական հասարակական կեանքը թէև հակառակ չէ մարմնականի պահանջներին, սակայն դոքա լիակատար և նուրբ կերպով չեն ապրում այժմ. նկատուում է նոյնպէս, որ եւրոպացիների աչքերը դեռ չեն կարողանում տեսնել արտաքին բնութիւնը և մարդու մարմնի օիրուն ձևերը յոյների պէս. այդ պատճառով էլ կոչ է անում ուշք դարձնել զգայարանքների նուրբ կրթութեան վրայ:

Եթէ այս կոչը միտք ունի եւրոպական հասարակութեան մէջ, տպա որքան աւելի ևս հարկաւոր է այդ մեր հասարակութեան համար, որի անգամների աչքերը ոչ միայն չնշին տարրերելի, այլ և ակնյայտնի գեղեցկութիւններն անգամ դիտելու կարողութիւնը չունին:

Արտաքին կեանքի վայելքների ձևերը, մարմնական կարիքների իդէալիզացիան սիրուն և օրինակելի կերպով պատկերացրած է Արեգայի տիպի մէջ: Սակայն ամսոս, որ նրան պակասում է հոգու խորութիւնը, բազմակերպութիւնը և զուտ հոգեկան արժէքների գիտակցութիւնը:

Գրական դատերի միջոցաւ հասարակութեան մէջ այն միտքը տարածել, թէ Արեգան մլատակար մտքեր է քարոզում, նշանակում է ի նկատի չառնել այն միանգամայն գնահատելի արժէքը, որը նանթը գեղարուեստական կերպով մեր հասարակութեան առաջն է դնում՝ յունակամտութեան սգին: Արեգան աւելի քան

ժամանակակից տիպ է և ոչ այնպիսին, որը դեռ նոր պէտք է մանէ մեր կեանքի մէջ: Արեղայի տիպով մեր նոր կեանքի յաղթանակն է երգուած. մեզնից ամեն մէկի մէջ նստած է Արեղայից մի մեծ կտոր: Իստապարտել Արեղային, նշանակում է դատապարտել մեզ, մեր կուլտուրան և յունականութիւնը: Արեղայի քարոզած արժէքների մեծ մասը ընդունելի են ներկայի համար:

Մեր քննադատներից շատերը այն կարծիքին են, որ Արեղան մի այնպիսի Լոռիստ է, ինչպէս Վանահայրը: Այս կարծիքը լիակատար ճշմարտութիւն չունի իր մէջ. երկու տիպերը մի փոքր այդ խնդրում իրարից տարբերուած են: Պիեասայի մէջ չի շեշտուած, որ Արեղան ալտրուիստ է, սակայն նորա ոգևորութեան մի քանի հիմունքները՝ սէրը դէպի Սեդան, դէպի մարմնականը, դէպի զրօն աշխարհը և մարդիկ, յուզայի կեանքը, այնպիսի պայմաններ են, որոնցից հնարաւոր է կզրակացնելու, որ նրա մէջ հասարակական դեր անպայման պէտք է գոյութիւն ունենային կամ թէ կեանքի հենց առաջին քայլի մէջ արթնանային: Քանի որ նա աշխարհում շատ «դուեր» է ընդունում և նրանցից շատ-շատերին սիրում, ուստի և սկամայից ճանաչելով ուրիշների իրաւունքները՝ պէտք է իր հոգում տեղ տար այլասիրական զգացումներին և ըմբռնումներին: Լուս կլինէր, եթէ Արեղայի այդ կողմը պիեասայի մէջ աւելի շեշտուած և պարզարանուած լինէր:

Պիեասայի այս երկու տիպերը իրենց աշխարհահայեացքի խնդրում լիակատար չեն, այլ ճիակողմանի են: Նրանցից ամէն մէկը իր մտքի և բնաւորութեան որոշ կողմովը դրաւիչ է և ոչ իր բնույթի ամբողջութեամբ: Այդ երկու հերոսների մտքերի բաղխումները թոյլ են պատկերացրած, գրամատիզմը սաստիկ չէ, ուստի և շատ խորը չեն ազդում ընթերցողի վրայ մանուսանդ բաղխման տեսարաններում:

Շանթը մեր գրականութեան առաջ շատ կարևոր հարցեր է դրել, սակայն այդ մտքերի ներքին հիւսուածքները, սխառմի կառուցուածքը, մարդկային կեանքի որոշ կողմի տենչանքների յաջողակ և մշտական իդէալական սխմրուլը դեռ չի կարողացել տար «չին Աստուածներ» գրաման իսկական Աստուածներ գտնելու նախադուան է ներկայացնում այժմ:

Մեր գրականութեան մէջ վէճ բարձրացաւ նաև այն հարցի առթիւ, թէ «չին Աստուածներ» ի նիւթը զուտ պատմական հայկական, թէ ընդհանուր մարդկային է: Մեր բանասէրներից մէկի տուած բացատրութիւններից երևում է, որ Շանթը իր պիեասայի կմախ-

քը մեր պատմութիւնից է վերցրել, սակայն այդ բացատրութիւններն անգամ ինձ չհամոզեցին, որ այդ պիեսան դուռ հայկական բոյր ունի:

Մի պիեսայի նիւթ կարող է հայոց պատմութիւնից վերցուած լինել, սակայն այնպէս մշակուել վարպետ գրչի տակ, որ իր տեղական գոյնը միանգամայն կորցնէ և ընդհանուր մարդկային դառնայ: Մի պիեսայի կմախք շատ յաճախ այնքան քիչ նեղ ազգային և տեղական գոյն ունի, որ հեղինակը երբ այդ կմախքին կերպարանք է տալիս, նա կորցնում է իր ազգային ընտելը և հասարակութեան մէջ այն հաւատը յառաջացնում, որ այդ գէպքը իր ամբողջութեամբ կարող էր պատահել ամեն մի կուլտուրական հասարակութեան մէջ: Շանթի Հին Աստուածները այդ բնաւորութիւնն ունի. տիպերը, գէպքերը, գործողութիւնները, հոգեկան ներքին ապրումները և ընդհարումները այնպէս է պատկերացրած, որ այդ բոլորի ետեր տեսնում էք առհասարակ կուլտուրական մարդուն և ոչ թէ մասնաւորապէս որ և է դարումի հայ մարդու: Ամեն մի կուլտուրական երկրի պատմութեան և ներկայի մէջ կարող էք պատահել թէ այդ պիեսայի հիմնական խնդրի արժարժմանը և թէ տիպերի այդ գունաւորմանը: Հին Աստուածների մէջ չկան հայկական կեանքի այն տառնձնայատկութիւնները, որոնք գոյութիւն ունին օրինակ Շիրվանշաղէի դրամաներում:

Շանթի պիեսայի ընթերցանութեան ժամանակ ևս գոնէ մըտքով վերապրում էի իտալական վերածնութեան դարը, երբ կուլտուրայի պատմութեան մէջ բացառիկ առանձնայատկութեամբ մարմինը, զգայարանականը, արտաքին գեղեցկութիւնը, ազատանհատը և միջնադարեան ճգնական և աշխարհամերժ կարծիքները ուժեղ թափով իրար էին բաղիւում և յուզում ժամանակի հասարակութիւնը: Հոգեկան զանազան կողմերի և կարիքների բաղիւման այն ձևը, որը պատկերացրած է «Հին Աստուածների» մէջ, ուելիեֆ կերպով տեղի է ունեցել վերածնութեան դարում և մասնաւորապէս Ռատլիայում:

Յունական հին կուլտուրան զգայական, մարմնական, էսթետիկական էր իր էութեան մէջ և ընդհանրապէս այդ ուղղութեամբ ամբողջական, միջին դարումը ընդհակառակն ճգնական, մարմինը, բնութիւնը արհամարհող, հոգին գէպի անդրբնականը դարձնող, արտաքին ու դուռ աշխարհիկ արժէքները մերժող էր. միջին դարերն ևս այդ ուղղութեան մէջ ամբողջական էին: Վերածնութեան դարում մէջ յունական և միջնադարեան տեսակէտները և արժէքները իրար հետ են ընդհարում ուժգնօրէն: Յունական դարում Արեղաներ կային, միջին դարում Վանահայրներ, իսկ վերածնու-

թեան դարում երկուսն էլ իրար հետ բաղխուելիս:

Աւելի պարզելու մեր ասածների ճշտութիւնը բերենք մի քանի կուլտուրական պատկերներ, ընթերցողին համոզելու, որ Շանթը սիրուն կերպով պատկերացել է այդ դարերի կուլտուրական ծրագիրները: Գեղարուեստի յայտնի պատմագէտ Մուտերը հետևեալ կերպ է համեմատում յունական շրջանը և միջին դարերը. «Քրիստոնէութիւնը միջին դարերում ճգնական, ուրախագուրկ կրօն էր դարձել: Հին յունական կուլտուրան պայծառ էր, մի մեծ օրհներգ էր գեղեցկութեան համար. մի հպարտ ինքնապրումն էր: Մարդը իր Աստուածները իր բնօյթի պէս էր ստեղծում: Աւելի սուրբ քան շկար, քան սէրը, աւելի աստուածային, քան գեղեցկութիւնը: Այս ուրախ, զգայագոհ կրօնից վերածնեց հելլէնական գեղարուեստը, այն առողջ, յաւիտենապէս ժպտուն գեղարուեստը, որը ամեն մի հիւանդագին ցանկասիրութիւնից ազատ՝ գեղեցկութեան և զգայականի յաղթանակն էր ազդարարում աշխարհին:

Այլ է պատկերը միջին դարերում: Այս աշխարհային կրօնին, որը վարդապետում էր ապրել, յաջորդեց անդրաշխարհային կրօնը, որը ասում էր, որքան կարիքագուրկ մարդը իր աշխարհային կեանքը ձևակերպէ, այնքան աւելի մեծ իրաւունք ունի երկնային երանութեան համար: Զգայարանքների զուարթ պաշտամունքի և հպարտ իշխողների մորալի (Heramoral) տեղը բռնեց բնագոյների յանցաւորութիւնը և ստրկական խոնարհութիւնը: Միայն ճգնութիւնը և ապաշխարանքը, միայն մարմնի ներքինու նման սպանումը կարող էին երկնքի հանապարհները բանալ:

Ահա ձեզ և Շանթի պիեսայի ծրագիրը. ի՞նչ էր ըստ վերոյիշեալի միջին դարը. «ճգնական», «ուրախագուրկ», «անդրաշխարհային», «կարիքագուրկ», «բնագոյները յանցալի», «խոնարհութիւնը», «ճգնութիւնը» և «ապաշխարանքը» էական արժէքներ, այսինքն հաւասար է Շանթի վանահօրը:

Իսկ ի՞նչ էր հին դարը. «հպարտ ինքնապրումն», «գեղեցկութեան և սիրոյ օրհներգ», «զգայագոհ», «ժպտուն» և «պայծառ գեղարուեստ», «զգայարանքների յաղթութիւն». այսինքն՝ հաւասար է Շանթի Արեղային: Շանթը նոր պատկերների մէջ ձևակերպել է գեղարուեստական կերպով վերև բերած ցիտատի իմաստը:

Բայց Շանթը պատկերացնում է երկու հայեացքների կոխը, որը այդ ձևով տեղի է ունեցել իսկապէս Իտալիայում, ուր մի կողմից զգայականը, գեղեցիկը, մարմնականը և բնականը, իսկ միւս կողմից հին միջնադարեան կարծիքներ իրար էին հանդիպում և իրար դէմ պայքարում: Մի փոքրիկ պատկեր այդ դարուց:

Փլորենցիան հումանիզմի կենդրոնատեղին էր, իսկ Մեդիչիների տոհմը նոր սղու կենդանի պահողը: Լորենցո Մեդիչին մի նուրբ, կիրթ ճաշակի և վարժուհիների տեղ մարդ էր, իր բնույթի և էությունից հին յոյն: Փլորենցիայից դուրս գտնուող իր վիլլաների մէջ ընթրիքներ, ճաշկերույթներ էր տալիս ժամանակի գիտնականներին, գեղարուեստագէտներին, բանաստեղծներին և փիլիսոփաներին: Սրանք ապրում էին բաւարարելով բոլոր զգայարանքների պահանջներին, իրենց հոգիները լցնում էին գեղեցկութեան և բաւականութեան գրգիռներով. ազեղը, անդրբնականը, կենսամերժ կարծիքները, արամադրութիւնները արտաքսուած էին Լորենցոյի ուրախութիւններով և հաճոյքներով ի վիլլաներից: Երգւում էին նաև նրա հեղինակած երգերից հանդէսների և կարնավալների ժամանակ: Նրա երգերից մի փոքրիկ օրինակ.

«Որքան գեղեցիկ է երիտասարդութիւնը, նա փախչում է սակայն: Ով ուզում է բախտաւոր լինել, թող լինի իսկոյն: Վաղուայ գալիքը անյայտ է:

Տիկիներ և երիտասարդ սիրահարներ, կեցցէ Բարոսը, կեցցէ սէրը: Եւրաքանչիւրը թող նուազէ, պարէ ու երգէ, որպէսզի սիրոյ հաճոյքը նրա սիրտը բոցավառէ:

«Յաւն ու հոգսը պէտք է զինաթափ լինին: Ով ուզում է բախտաւոր լինել, թող լինի այժմ: Վաղուայ գալիքը անյայտ է»:

Որքան գեղեցիկ է երիտասարդութիւնը, նա փախչում է սակայն»:

Ահա ձեզ այն կեանքը, որը երազում էր Աբեղան: Բայց ահա դորա կողքին նաև մի այլ կեանք, որը այլ կողմից զարով բաղթւում էր այդ ուրախ կեանքի հետ և նրա մէջ մի փոքր գամնութիւն մտցնում: Այն ժամանակ, երբ Լորենցո Մեդիչու վիլլաների մէջ զգայարանքների յաղթանակն էր երգւում, հենց այդ ժամանակները նոյն Փլորենցիայի եկեղեցիներից մէկի ամբիոնից՝ գունատ, գալիացած, նեարդուտ վանական Սալանարուան էր իր կրակաւ, կործանիչ և աղաղակող քարոզները կարդում ժամանակի զգայական կեանքի և նրա ներկայացուցիչ Մեդիչու դէմ: Սաւանարուան քարկոծում էր իր ժամանակի զգայական բոլոր երեսիթները, կուլտուրական-աշխարհիկ բոլոր արժէքները, զգայարանքները խտացնող և բնութեան արտաքին փայլի մէջ արբեցած նկարիչների գործերը և մեղքի մէջ տառապող մարդկութեան կոչ էր անում դէպի «ապաշխարութիւնը», «ներքին մաքրումը», «մարմնականի ճնշումը» և աստուածային արամադրութիւնները:

Սաւանարուան, որոշ կողմից Շանթի Վանասօր նախատիպը, մի ամբողջ հոսանք յառաջացրեց Փլորենցիայի կեանքի մէջ. առաջ, որ փողոցներում կառնաւալների երգերն էին հնչում, այժմ լսում

էր Սաւանարուայի հետևողների կրօնական երգերը: Քարոյկներ էին պատրաստում և այլում այն՝ ինչ վերաբերում էր աշխարհիկ կուլտուրային:

Ահա կուլտուրական ուժեղ պատկերներ, որոնք կարող էին աւելի հիմք ծառայել Շանթի երկի ստեղծագործմանը, քան հայոց պատմագիրներից հանած մի քանի կցկաուր տեղեկութիւններ, որոնք պիեսայի արժանիքի համար համարեա ոչ մի առանձին արժէք չունին:

Շանթի պիեսայի նիւթը աւելի քան հայկական չէ. նա իսկական իմաստով ընդհանուր մարդկային է: Այդ նիւթով կարող է հետաքրքրուել կուլտուրական ցեղերին պատկանող ամեն մի անհատ:

Այս երկը ընդհանուր մարդկային է ոչ միայն այն պատճառով, որ նիւթը եւրոպական ընտյթ ունի, այլ նաև այն հիմամբ, որ նրա առանցքը կազմող իդէան դուռ մարդկային է և ժամանակակից:

Այս պիեսայի մէջ հայեկական կեանքի երկու կողմերի պահանջների կոխն է արտայայտած. հողին մի կողմից իր իշխանութիւնը տարածում է դէպի արտաքին բնութիւնը և իր թարմինը և նրացից ստանում բազմազան տոլաւորութիւններ, միւս կողմից նա ունի նաև շատ ներքին կարիքներ, նա կարւում է յաճախ արտաքին աշխարհից, ամփոփում է ինքը իր մէջ և այդ ներքին խորասուզումների միջոցաւ միանում է անդրընտականին վերաբերող հարցերին: Այս դէպքում հողին աշխատում է մերկանալ արտաքին աշխարհի տոլաւորութիւններից: Պատմութեան մէջ շատ յաճախ են հողու այն երկու տենդենցները իրար դէմ ծառայել և աշխատել միակողմանիութիւնների հասնելով իրար ոչնչացնել կամ չեղաքացնել: Բայց միթէ միայն հասարակական իտւերի մէջ, միթէ ամեն մի գիտակից անհատ իր մէջ չի ունեցել հողու այդ երկու մասերի կոխը, որքան յաճախ անհատը հարկադրուած է լինում ձնշել, ոչնչացնել իր մէջ յառաջացող վայրկեանական մտածումները, գրդիւնները, բնագոյները, որքան յաճախ մարդիկ դո՛հ են գնացել իրենց ներքին կեանքի այդ անհաւասարակչութիւնից: Այս ընդհանուր մարդկային միակողմանիութիւնների կոխն է պատկերացրած Շանթի գրամայի մէջ. կոռէի այդ ձևը, թւում է, յաւիտենական է կուլտուրական կեանքի համար: Այդ խնդիրը կատուած է նաև զանազան տարիքների հոգեբանութեան հետ, երիտասարդները ընդհանրապէս հակուած են լինում դէպի Արեղան, տարիքաւորները և ծերերը դէպի Վանահայրը:

Այս գրաման ոչ միայն այն պատճառով է ժամանակակից հայերիս համար, որ առհասարակ մարդկային ընտյթի հետ կապ-

ուսած խնդիրներ է շօշափում, այլ նաև մեր ներկայ հասարակութեան հոգեկան մակարդակի առանձնայատկութեան պատճառով: Ուրիշ ժողովրդների վերածնութիւնը տեղի է ունեցել հինգ-վեց դար առաջ, իսկ մերը միայն 19-րդ դարում: Մինչև այս շրջանը մեր մտածելակերպը, շատ չի տարբերուել մեր միջին դարու գործիչներից. մենք մինչև այդ շրջանը կրթուել ենք միմիայն նարեկացու, վարք սրբոցի, մեր միջնադարեան կրօնա-փիլիսոփայական մտածողների գրուածքների վրայ: Յունականի թոյլ հետքերը մեր երկիրն է եկել 19-րդ դարում եւրոպական կուլտուրայի կիսա-խեղաթիւրուած կերպարանքի տակ: Ներկայի մեր հին սերունդը հանդիսատես է եղել այդ պայքարին և նոյն իսկ մասնակցութիւն ունեցել: Նոր սերունդը դեռ անցման շրջանի մէջ է իր բարոյական, գեղարուեստական, փիլիսոփայական և կեանքի հետ կապուած այլ խնդիրների վերաբերմամբ: Մենք տապալուում ենք նոր և հին կուլտուրաների հայեացքների մէջ. մենք ոչ զուտ աշխարհիկ ենք, ոչ զուտ միջնադարեան. ոչ զգայական և ոչ էլ խորն ներքին կեանքական: Մեր և հասարակական շերտերի մէջ դեռ իրար դէմ են պայքարում այդ երկու մեծ կուլտուրաների հետքերը: Արեղան, իսկ աւելի քիչ շափով Վանահայրը դեռ այսօր էլ կան, դեռ կենդանի են, դեռ կողմնակիցներ են սրտում:

Հին Աստուածները զուտ պատմական նիւթ չէ շօշափում. թէև Վանահօր տիպը մեզ համար աւելի է հասկանալի դառնում անցեալ կեանքի վերյիշման միջոցաւ, սակայն պիեսայի մէջ արժարժուած խնդիրների վերջնական լուսարանման համար է աշխատում մեր ներկայի կուլտուրական կեանքը:

\* \* \*

Շանթի այս գրամայի յաջողութեան պատճառները և գնահատման խնդիրը զանազան բացատրութիւնների տեղիք տուին:

Այս պիեսայի հանած աղմուկի պատճառները մի քանիսն են: Հիմնական պատճառներից մէկն է պիեսայի ժամանակակից խնդիրներ արժարժելու հանգամանքը: Ամեն մի գեղարուեստական երկից պահանջուում է, որ նա որ և է կերպ խօսէ անհատի հետ, զգացումներ, մտքեր արթնացնէ նրա մէջ: Լսողը կամ կարգացողը պէտք է իր հոգու մասերը տեսնէ պիեսայի մէջ առարկայացած: Հին Աստուածների մէջ այդպիսի յարաբերութեան ստեղծման հանգամանքներ շատ կան: Այնտեղ քննուող հարցերից շատ շատերը մենք ապրել ենք, նոցա շուրջը ուրախացել կամ տխրել ենք. այնտեղ ժամանակակից հասարակութեան հոգու սրտը կողմերն են առարկայացած: Եթէ պիեսայի և լսող կամ կարգացող

հասարակութեան մէջ անկեղծ և անմիջական կապ է ստեղծուում, նշանակում է պիեսան գեղարուեստական երկից անուելիք պահանջներից մէկին արդէն բաւարարութիւն է տալիս:

Հին Աստուածները հասարակութեան ուշադրութիւնը իր վրայ գրաւեց նաև թատերական գրուածքի մեր մօտ քիչ տարածուած ձևի կիրառման պատճառով: Մարդու հոգին մշտապէս թարմութիւն, նորութիւն է ցանկանում, երկար ժամանակ տևող գրգիռները բխացնում են նրան և ձանձրոյթ պատճառում: Միևնայն դրութիւնը գոյութիւն ունի նաև հասարակութեան մէջ, որը նայնպէս երեխայի պէս դէպի նորութիւնն է ձգտում: Շանթի պիեսան ունի ամենամեծ յարմարութիւնը այդ ուղղութեամբ ազդելու: Հասարակութիւնը միշտ հանդիսատես է լինում սուօրեայ դրամաների ներկայացմանը, սովորական կեանք, սովորական դրամաներ: Այժմ նրա տաաջն է դուում մեր կեանքի հարցերի նոր ձևակերպումներ, նոր պատկերներ, նոր էֆեկտներ: Ամբողջ փայլը մեծանում է և զգայարանքները հաճոյք են ստանում աւելի, ուրեմն և հասարակութեան մղումը դէպի այդ պիեսան միանգամայն հասկանալի է դառնում:

Այսպիսի հիմունքները մի գեղարուեստական երկի յաջողութեան համար շատ էլ յանձնարարելի չեն, որովհետև ներքին դուա գեղարուեստական արժանիքներով նա պէտք է ազդէ ամեն մէկի վրայ և ոչ արտաքին նորաձևութիւններով: Եթէ Հին Աստուածների ազդեցութեան գաղանփքը այս վերջին տեսակի արժէքները լինէին, այն դէպքում այդ երկը մեր գեղարուեստական գրականութեան մէջ մի շատ չնչին տեղ պէտք է բռնէր: Սակայն վստահօրէն կարելի է պնդել, որ այդ գրուածքի մէջ կան դուա գեղարուեստական այնպիսի յատկանիշներ, որով նա, ինչքան էլ թերութիւններ ունենայ, անհրաժեշտօրէն ազդել կարող է ամեն մի գեղարուեստական պահանջներ և ճաշակ ունեցող մարդու վրայ:

Ամեն մի գեղարուեստական երկից պահանջուում է, որ գաղափարների ծանրութեան տակ չծալուէ: Գաղափարայինը սպանում է գեղարուեստականը, տարածուած մի կարծիք է սա, որը իր մէջ պարունակում է խորին ճշմարտութիւն: Գաղափարները զգայական տուեալներից բարձրանում են դէպի վերացականը, կոնկրետ պատկերները շքանում են և նրանց տեղը բռնում են մերկութեան մօտեցող բաւերը: Գաղափարները մեղ տալիս են իմացութիւններ և նոցա սխառեմատիղացիա, սակայն չեն տալիս զգայական, գունեղ, մտքի հաճոյական պատկերներ, այդ պատճառով էլ գաղափարների հետևանքները չեն տալիս զգացումներ: Գեղարուեստի մէջ ընդհակառակն էական գործօնն է զգացումը: Եթէ գեղարուեստական մի երկի մէջ գաղափարները սկսեցին մեծ

տեղ բռնել, նշանակում է այդ երկը աւելի գիտական գրուածքի է մտնում, քան գեղարուեստական: Գաղափարները և իշխական մասերը պէտք է այնպէս շողկապուած լինեն զգայական—կոնկրետ պատկերների հետ, որ ընթերցողը չզգայ, թէ ինքը ինչպէս է ընդունում հեղինակի գաղափարները այդ սիրուն և հաճելի շքշապատի մէջ: Զգայական պատկերների, երեսակայութեան շինուածքների և գոցա ներդաշնակելու մէջ պէտք է երեսայ իսկական գեղարուեստագէտի հոգու թափի ուժը: Շանթը այս կողմից յաջողակ գրող է: Նրա գրուածքը ոչ միայն ազրատ չէ, այլ նոյն իսկ հարուստ է մտքերով, սակայն այդ մտքերը այնպէս է շերտաւորել զգայական սիրուն պատկերների և նմանութիւնների մէջ, որ ընթերցողը շատ դիւրին և հաճելի եղանակով ընդունում է այդ բոլորը առանց մի վայրկեան անգամ զգալու, թէ մտքի տեսակէտից որ և է ծանր խնդրի հետ գործ ունի: Մտքերը քաղցր նեկտարի պէս հալւում են ընթերցողի հոգում. այդպիսի տեղեր լինքն են Հին Աստուածների մէջ. օր, երբ Արեղան սէրը, յաղթանակը, մարմինն է երգում, կամ Վանահայրը իր նոր եկեղեցու մասին է էնտուզիազմի մէջ խօսում:

Ոչ միայն գաղափարները, այլ և ամենահասարակ գաղափարութիւնները, խօսակցութիւնները, ներքին կեանքի վիճակները սիրուն պատկերների մէջ են արտայայտուած. այդ պատկերները երբեմն ուժի, երբեմն մեղմութեան, երբեմն յուսահատութեան, երազականի և այլ վիճակների արտայայտութեան համար են ծառայում. մեծ մասամբ պատկերները համնում են իրենց բուն նպատակին: Այդ բոլորի նպատակն այն է, որ ընթերցողը իր հոգու մէջ այդ պատկերների օգնութեամբ պարզ կամ խաւար զգացումներ կամ զգացումակերպ արամադրութիւններ արթնացնէ: Զգացումները կախուած են մտապատկերներից, որպէս զի ընթերցողը գեղարուեստական բուն վիճակին, այն է զգացումների վայելմանը հասնէ, հեղինակը, որի ձեռքին միայն բռնել կան, պէտք է այդ բռնելից այնպիսի կառուցուածք ստեղծէ, որ նրանց յաջորդմանը և յարարերմանը յաջորդեն կամ ընթացակից լինեն զգացումներ: Զգացումների ճանապարհը մտապատկերների վրայից է տեղի ունենում գեղարուեստի բոլոր ճիւղերի մէջ: Շանթի գրուածքում այդ ճանապարհները շատ յաջողակ կերպով է մշակուած. այդ հեղինակի գեղարուեստագէտ լինելու ազացոյցներից մէկն է:

Գեղարուեստական երկի վերջնական նպատակն է զգացումներ արթնացնելը: Գեղարուեստականութիւնը էսպէս հիմնուած է այդ կողմի վրայ. մտապատկերները պէտք է գունաւորուեն զգացումներով և վերջ ի վերջօյ ձգտեն նոցա յառաջացման և արտայայտ-

մանք: Եթէ հեղինակին չի յաջողում զգացումներ ծնեցնել ընթերցողի կամ լսողի մէջ, նշանակում է նրան չի յաջողուել գրել գեղարուեստական գործ: Ծանօթը այդ կողմից շատ գնահատելի գրող է. սիրոյ, յուսահատութեան, ներքին անհանդատութեան, գեղեցկութեան, կեանքի արբեցումին վերաբերող զգացումները արտայայտում է մեծ վարպետութեամբ: Դուք տեսնում էք ձեր հոգու առաջից անցնում են բազմաթիւ պատկերներ, և այդ պատկերների հետ գործող անձինք. տեսնում էք, թէ նրանք ինչպէս են սարսափում (սատանաներին վերաբերող տեսարանը), ինչպէս են ուրախանում (Սեղային տեսնելիս), ինչպէս են տանջւում (Մարիամ իշխանուհին, Արեղան իր անցման շրջանում), ինչպէս են իրենց իշխում և խեղդում իրենց մէջ աշխարհային նուրբ զգացումները (Վանահայրը), ինչպէս են իղէական ծրարներ պարզում և խորը էնտուզիազմի մէջ ընկնում (Վանահայրը), թէ ինչպէս են խելագարի պէս սիրում արտաքին բնութեան գեղեցկութիւնը և այլն և այլն: Զանազան կեանքեր, բոլորն էլ իրենց ճակատագրից մղուած, իրենց հոգու կեանքում ապրում են և զգում իրենց ներքինը և շրջապատը: Սակայն ոչ միայն այդ, այլ և ընթերցողը իր մէջ էլ է ապրում այդ զգացումները: Գեղարուեստականն այն գէտքում է իր լիակատար ծաղկմանը հասած, երբ նա կարողանում է իր հետ քաշել, տանել լսողին, տեսնողին կամ կարգացողին: Պէտք է ապրել հերոսների հոգու կեանքի վիճակները, պէտք է մասնակից լինել նրանց դրութեանը իր հոգու մէջ նման վիճակները նրբօրէն վերապրելով: Տեղ-տեղ Ծանօթի հերոսները ընթերցողի հոգին լցնում են այդպիսի զգացումներով: Արեղան տանջւում է, կասկածը, թերահաւատութիւնը ընկել է նրա հոգու մէջ. չէ կարողանում ոչ հին և ոչ էլ նոր արամադրութիւնների ետեից գնալ: Տապալիւմ է անորոշութեան և մտքերի հալածանքների մէջ: Երբ կոյր Վանականը դարձի է հրաւիրում նրան, ընկնում է խաշի առաջ և դաճնադին սղրում:

«Ես կորսուած մեղաւոր մըն եմ, փրկէ ինձի, տէր. ևս ինկած յանցաւոր մըն եմ, օգնէ ինձի, տէր. մեղքի մէջ խեղդւող մըն եմ, բռնէ ձեռքս, տէր: Տես, մեղքի ծովուն մէջ... մեղքի ծովուն մէջ... ծովուն... ծովուն...»

Այս բառերի մէջ ընթերցողը զգում է Արեղայի անկեղծ ցաւը, տանջանքը, հոգու ճնշուածութիւնը:

Մի այլ տեղ հոգու այդ գինաթափ, անկայուն անհաստատ վիճակը հետևեալ կերպ է պատկերացրած.

«Տուր ինձի իմ հանգիստս, տուր ինձի իմ աղօթքներս, տուր իմ վստահութիւնս ըրածիս, կեանքիս, ուժիս: Ամեն, ամեն ինչ կը փլի շուրջս»: «Ալ չկայ ինձի հանգիստ ոչ խուցիս մենութեանը

մէջ, ոչ դուրսը, ոչ եկեղեցիին կամարներուն տակը: Մտղմունե-  
րուն մէջէն քո ձայնդ կըլլեմ, մութ կամարներուն տակէն քու  
աչքերդ ինձի կը ժպտին, խունկի հոտին մէջէն քո թաց մաղե-  
րուդ բոյրը կը զգամ...: Ինչո՞ւ, ինչո՞ւ կը տանջես ինձիս:

Զգում ես այս տողերի մէջ երիտասարդ սրտի մեկանխօչիկ  
սիրոյ ձայները: Շուրջը ամեն, ամեն բան քայքայուած է և ամեն  
տեղ իր սիրածի պատկերն է տեսնում: Աշխարհը մի մեծ Սեղա է  
դարձել: Արեղան ընթերցողին վարակում է իր տրամադրութեամբ,  
իբր յոյզերով, իբր զգացումներով և յուսահատ և անօգնական ա-  
ղաղակներով:

Մի այլ տեղ, երբ հարկաւոր է պատկերացնել Արեղայի յու-  
զական, թափոտ, ամեն բան մտացութեան տուող և ամեն մի  
զիջումի պատրաստ սիրոյ զգացումը, հետեւեալ տաք և կրակոտ  
խօսքերն է գրում Արեղայի բերանում:

«Օ, դուն, դուն իմ էութեանս հմայքը, դուն թաղուհին իմ  
մտքերուս. դուն իմ սրտիս ծովը, դուն փոթորիկը իմ հողիիս:  
Արևուն հուրքն ես դուն, ծովերուն յոյզքն ես դուն, բնութեան  
պարզէն ես դու ինձի: Թող, թող փաթթուիմ ոտքերուդ, թող  
համբուրիմ կոխած հողդ. համբուրիմ այդ ճերմակ հագուստիդ  
փէշերը...»:

Միթէ ունինք իրաւունք ճերմակ, թրթռուն, երազոտ սիրոյ  
զգացումը աւելի գեղեցիկ բառերի մէջ դնելու պահանջը անել  
հեղինակից: Հէնց միմիայն այս բառերը բաւական են Արեղայի  
սրտի ծովի մասին պատկերացում կազմելու և վերզգալու մեր  
մէջ նրա սրտի ներքին թրթրոնները: Այսպիսի կտորներ շատ կան  
այս գրուածքի մէջ: Այդ բոլորը իրար հետ միախառնուելով տա-  
լիս են երկին դուռ գեղարուեստական արժէք: Էլ զարմանալու  
բան չկայ, եթէ հասարակութիւնը առաջնորդուելով իր բնազդա-  
կան գեղարուեստական պահանջներից՝ ողորուէ այդ պիեսայով:

Ամեն մի ընթերցող, ամեն մի թատրոն յաճախող պահան-  
ջում է գեղարուեստական երկից մտքի համար կերակուր, երեւ-  
կայութեան համար սիրուն պատկերներ և սրտի համար զգաց-  
մունքների աղբիւրներ: Այս երեք պահանջներին էլ որոշ շափով  
բաւարարութիւն է տալիս Շանթի երկը:

Շանթը երածիշտ էլ է. բայց երածիշտ լեզուական նշաննե-  
րի, ոչ նոտաների: Ամեն մի գեղարուեստական գրուածք ազդելու  
երկու ճանապարհներ ունի. մէկ ազդում է նա ըստ բովանդակու-  
թեան և մէկ էլ ըստ արտաքին կազմապարի, կամ այլ խօսքով ա-  
սած՝ բառերով: Երբ լսում ենք մի բանաստեղծութիւն, պէտք է,  
եթէ լուր գրուածք է, մեր հոգու մէջ պարզ պատկերացնենք նրա  
մէջ արտայայտած իմացական դրութիւնները և սպրկենք պարու-

Նսակած զգացումները: Սա զեղարուեստական հաշակման մի կողմն է, երբ բովանդակութիւնը, մտքի ամբողջացումն է դեր խաղում: Սակայն բանաստեղծութիւն կարգալիս բաները, սիրուն, իրար հետ ներդաշնակուած ու յարմարօրէն հիւսուած բաներն ևս ազդում են իրանց երաժշտական ելևէջներով և այդպիսով բարձրացնում գրուածքի զեղարուեստական արժէքը: Բաները բանաստեղծութեան կադասարներն են. իսկ սրպէս զի նրանք լաւ ամփոփեն իրենց յայանելիք բովանդակութիւնները, պէտք է յարմար լինեն բովանդակութեան սգուն և առանձնայատկութեանը: Շատ յաճախ է պատահում, մանաւանդ մեր գրականութեան մէջ, երբ հեղինակը չի կարողանում բաները, արտաքինը և ներքինը ներդաշնակօրէն արտայայտել և իրար հետ շողկապել, ուստի հեղինակը կամ ըստ ձևի լաւ է և վատ ըստ ներքին բովանդակութեան և նիւթի և կամ լինում է ըստ բովանդակութեան հարուստ, սակայն չի կարողանում այդ բոլորը գեղեցիկ ձևերի մէջ ձուլել: Շանթը մեր գրականութեան այն վարպետներիցն է, որը այդպիսի միակողմանիութիւններից ազատ՝ բովանդակութիւնը և ձևը միացնում է իրար ներդաշնակօրէն: Կանտը խորը յափշտակութեամբ կարգացած Ռուսօի գրուածքների լեզուի մասին հետեւեալն էր գրում. «Ես պէտք է Ռուսօն այնքան կարգամ, մինչև որ լեզուի գեղեցկութիւնը ինձ էլ չխանդարէ, սրպէս զի կարողանամ այնուհետև միայն բանականութեամբ քննել: Նման մի վտանգ գոյութիւն ունի նաև Շանթի գրուածքի մէջ: Նրա լեզուն շատ է գրաւիչ-քաշում, տանում է ընթերցողին իր հետ: Ոչ միայն ձևական գեղեցկութիւն ունի, այլ և յարմարում է նաև բովանդակութեան: Նիւթի թեթև, ուժեղ, մելամաղձիկ, երազական, ջերմ և այլ ազաւորութիւններ արտայայտելու գէպում Շանթը կարողանում է վարպետօրէն համապատասխան բաներ և դարձուածքներ գտնել և ներդաշնակօրէն իրար հետ կցել. այդպիսով ստացւում է լեզուի երաժշտութիւն:

Փոքր ինչ վերև մի քանի կտորներ բերինք զգացումների վաստակութիւնը ցոյց տալու համար, քայց նրանք կարող էին նաև լեզուի քաղցրութեան օրինակներ ծառայել: Բայց բերինք մի քանի կտորներ ևս:

Եօխան—(եղջիւրը առած կերթա բազնին առջևը ու գինին վեր բարձրացնելով) Քեզի, սվ վեհդ գիցուհի, սվ փրփրածինդ Ասողիկ, դուն որ անարատ ևս ու սքանչելի, քու ելած փրփուրիդ նման. դուն վերին գեղեցկութիւն, դուն գերագոյն հմայք ու քընքշութիւն, քու տուած լոյսիդ նման. դուն որ աղբիւրն ևս սիրու, յոյսերու ու յուզումներու, քեզի օրօրոյ ալիքներուն նման. քեզի, ծովածին, քեզի կը նւերեմ այս վայելքի եղջիւրը՝ լիքը ազնիւ ու

արրեցնող գինիով, գին, որ գեղեցկութեան ու սիրու վայելքը,  
հեշտանքը ու արրեցումը կու տաս մեզի: Ընդունէ, գիցուհի, իմ  
ձօնս:

Թեթև, քնքոյշ ծփանքով տպաւորութիւնները հետևեալ բա-  
ռերի մէջ է արտայայտուած.

Անուշ քուրիկ,	կամ	Սէրը սիրով
Փրփուրիկ,		Սէրը սիրով
Հաս մը, հաս մը		Օրէնքն աս է
Համքուրիկ		Գարերով:

Ալիքների շարժումը, ելիէջը, իբար փաթաթուելը հետևեալ  
կերպ է արտայայտուած.

Չաւազան ալիկներ — (Բերնէ բերան ու ընդհատ-ընդհատ)

- Պիտի կորչիս:
- Տեղ տուր լանջիս:
- Գարին փակչիս:
- Ա՛յ, հասանք, հասանք:
- Հասանք է, հասանք:
- Ի՛նչ վազեր ենք ափէ ափ:
- Ի՛նչ ցատկեր ենք շափէ շափ:
- Չափ, ի՛նչ շափ:
- Անչափ, անչափ:
- Չափ, չափ:
- Սա թռչիլ է, վազել չէ:
- Սա ետալ է, ցատկիլ չէ:
- Կեցիր, կեցիր ու կանչէ:
- Չէ, չէ, անցիր, աս ան չէ:
- Ա՛ն է:
- Ան չէ:
- Է՛, մէկ չէ:
- Կանչէ, կանչէ:
- Մ ենք պարապ չենք:
- Ոչինչ, կանչենք:
- Կանչենք:
- Կանչենք:

Խումբ մը ալիք — (Միաբերան)

- Հէ՛յ, ահանջէ.
- Յոյզ ու տենչ է ամեն լանջէ,
- Կը շառաչէ.
- Բեզի ծոփս է, որ կանչէ,
- Հէ՛յ ահանջ է:

Եւ այսպէս շարունակ:

Կարճ է պատահել, որ հեղինակը այս տողերը գրելուց առաջ երկար, շատ երկար պատկած շիճուկի ծովի ափին և լսած ալիքների շարճնի խաղերը: Այսպիսի գոհարներով լիքն են «Հին Աստուածները»: Հին Աստուածների հմայքը բարձրացնելու խընդրում Շանթի երգող լեզուն շատ մեծ դեր է խաղում:

Այսպիսով տեսնում ենք՝ Հին Աստուածների նիւթի այրող ժամանակակից լինելը, նիւթի ձևակերպման համեմատական նորութիւնը, գաղափարների յաջողակ լուծումը պատկերների հետ, յաջողակ պատկերացումները, զգացումների անկեղծութիւնը և լեզուի երաժշտականութիւնը այն հիմունքներն են, որոնք առիթ դառնալով մտացութեան տալու պիեսայի մէջ եղող պակասութիւնները՝ դարձնում են նրան գրաւիչ և գեղեցիկ: Շանթի երկը համաշխարհային գրականութեան համար առանձին նշանակութիւն չունի, որովհետև այդ երկի մէջ պակասում են հոգեկան կեանքի զարգացած և հասունացած գրամատիկ պատկերները, նոյնպէս և մտքերի և աշխարհահայեացքի ուժեղութիւնը և խորութիւնը: Շանթը նուրբ է, բայց խորը չէ: Իսկական գրական մեծութեան համար նրան պակասում են հոգու ուժը և բազմակերպութիւնը: Բայց Հին Աստուածները հայոց գրականութեան լաւագոյն գործերից մէկը պէտք է համարել:

Հին Աստուածների ընթերցանութիւնից յետոյ գալիս է մարդ այն եզրակացութեան, որ Շանթին յաջողում է երգել յատկապէս մեղմը, նուրբ գեղեցիկը, ոլորուն երազականը, թրթրուն գրաւիչը, ճնշուած ցաւը, զգայառատ հիացումը, աշխարհիկ երազկոտ սէրը, բնութեան պաշտամունքը, վայելքի հմայքը, կեանքի գերբնացած վեհութիւնը: Կոշար, կոպիտը, տգեղը, կատաղին, մուկին թափուտը, տարրերային կրքուտը հետու է նրա հոգուց: Ուժի և յողթանակի երգերի մէջ նա թոյլ է, այդ նրա էութեան ճիշտ արտայայտման տեղը չէ: Երբ փորձում է ուժեղը տալ, այդ ուժը էլի էլեզանտ կերպարանքի մէջ է մանում և թափը կտարում:

Բ. Կրիկեան

